

«Գուցէ, մտածեցի ես, իմ բարի աստղի շնորհիւ ես այստեղ կը հանդիպեմ իմ Մէշհէշի ծանօթներէց միքանիսին», և սկսեցի լաւ ուշադրութեամբ նայել ճանապարհորդներին: Ճիշտ է, շատ տարիներ էին անցել այն օրից՝ երբ ես ենթարկուել էի ֆալսիկային, և պարզ էր որ այդ երկար ժամանակը մեծ փոփոխութիւն առաջ բերած կը լինէր մարդկանց կերպարանքի վրայ, սակայն ես՝ որ լաւ ուսումնասիրել էի ամենմի ծանօթի դէմքի գծագրութիւնը, և ամենմի ծանօթի կերպարանքը շատ խոր կերպով տպաւորուել էր մտքումս, մեծ յոյս ունէի որ իմ յիշողութիւնը չէր վրիպելու:

Շատ նայելով և հչոքի չճանաչելով, ես սկսեցի յուսահատուել, և պատրաստուում էի հեռանալ՝ երբ մի ծանօթ քիթ, մի կլոր մէջք և մի դուրս ցցուած փոր աչքիս ընկաւ և գըրաւեց ուշադրութիւնս:

«Այդ կերպարանքն ինձ շատ ծանօթ է թւում, ասացի ես: Դա ինձ յիշեցնում է երիտասարդութեանս օրերի միքանիսը. անտարակոյս այդ քիթը, մէջքն ու փորը այնպիսի մի մարդու են, որ աւելի քան մի հասարակ ծանօթ է եղել ինձ հետ»: Ես յիշեցի իմ առաջին աղային—Օսման աղային. սակայն իսկոյն մոռացութեան տուի նրան, որովհետեւ ես աւելի քան հաստատ էի, որ նա վաղուց պիտի զոհ գնացած լինէր իր գերութեան տանջանքներին: Այնուամենայնիւ, ես դարձեալ նայեցի նրան, և ամենմի հայեացք ինձ համոզում էր, որ նա կամ Օսման աղան պիտի լինէր, կամ նրա եղբայրը, և կամ նրա ուրուականը:

Ես մօտեցայ այն տեղին որտեղ նա նստած էր, յուսալով լսել նրան խօսելիս ուրիշի հետ. սակայն նա կ'ասես թէ թրմրած էր (որ մի ուրիշ բնորոշ գիծ էր ի նպաստ կասկածներին): Մի քիչ սպասելուց յետոյ, ես զարմացայ երբ լսեցի նրան՝ իմ ականջներին լաւ ընտանի ձայնով հարցնելիս մի վաճառականից որ իր մօտից անցնում էր.—«Ի սէր Ալլահի, ասա, ինչքան է գառան մորթու գինը Ստամբուլում»:

«Օ՛, ես չեմ սխալուել, մտածեցի ես, դու հէնց ինքն ես, Օսման աղան ես», և իսկոյն մօտենալով նրան, ողջունեցի և յայտնեցի իմ ով լինելը:

Նա այնքան դժուարութեամբ հաւատաց իմ Հաջի Բաբա լինելս՝ ինչքան դժուարութեամբ ես կարողացայ ճանաչել, որ նա Օսման աղան էր: Երկու կողմից էլ զարմանք արտայայտելուց յետոյ, մենք սկսեցինք զննել միմեանց: Ես դիտեցի նրա մօրուքի ալեխառնութիւնը, և նա շնորհաւորեց ինձ իմիս գեղեցկութեան և սեռութեան համար: Նա շատ թարմ յի-

շողութիւններով խօսեց հետս կեանքի, անցաւորութեան և աշխարհիս ունայնութեան մասին, և ես նրա խօսքերից կարողացայ եզրակացնել, որ նրա կրած դժբախտութիւններն աւելի զօրեղացրել քան թուլացրել էին նրա՝ նախասահմանութեան վրայ ունեցած հաւատքը, և հէնց այդ հաւատքի շնորհիւն էր, որ նա կարողացել էր անքան հաստատ և անդորր մտքով տանել իր դժբախտութիւնները:

Իր սովորական համոռոտախօսութեամբ՝ նա պատմեց ինձ իր բոլոր արկածներն սկսած այն օրից՝ երբ մենք բաժանուել էինք միմեանցից: Նա ասաց, որ սկզբում, երբ թիւրքմէնների գերին էր դարձել, շատ թշուառ կեանք էր վարել, սակայն յետոյ հաշտուելով իր դրութեան հետ, նա իր սպասածից աւելի հաճելի ժամանակ էր անցկացրել, որովհետեւ նրա գործն ու պարտականութիւնն էր եղել նստել և հսկել իրան յանձնուած ռզտներին, որոնց բնութիւնը իր բնութեան պէս խաղաղ և փիլիսոփայական լինելով՝ նեղութիւն կամ անյարմարութիւն չէր պատճառել իրան, չէր խանգարել նրա հանգստութիւնը:

Նա միշտ միևնոյն տեսակ կերակուրն էր կերել. բայց մելիթարուել էր նրանով, որ միշտ պաղ ջուր էր ունեցել խմելու: Միակ զրկանքը, որ նա շատ զգալի կերպով կրել էր՝ ծխախոտ չունենալն էր եղել: Երկար ժամանակից ի վեր նա սովորութիւն էր ունեցել ծխելու, և այդ պատճառով խիստ դժուար էր եղել նրա համար իր ժամերն անցկացնել առանց ծխախոտի գործածութեան: Տարիներ էր նա անցկացրել այդ կերպով, և նա վճռել էր իր կեանքի մնացած օրերն անցկացնել ուղտերի հետ, երբ իր բախտի անիւը յանկարծ դարձել էր և նա մի անգամ ևս ոգևորուել էր ազատութեան յոյսով:

Այսպէս է պատահում: Մի օր թիւրքմէնների մէջ մի մարդ է երևան գալիս, որը իրան մարդարէ է հրատարակում, և ինչպէս ամեն խաբեբայ սովորաբար անում է, նա էլ համբաւ և ազդեցութիւն շահելու համար մի-երկու անգամ հրաշքներ է գործում, որոնք դիւրահաւատ թիւրքմէնների կողմից ընդունւում են որպէս իսկական հրաշքներ: Իր գործերով ու խօսքերով նա այնպէս ազդում է նրանց, որ իր խօսքը նրանց համար օրէնք է դառնում: Ամենանշանաւոր թիւրքմէն աւազակները սիրով նրան են ընծայում իրանց բերած աւաքները, և իրանք էլ ժողովւում են նրա դրօշակի տակ:

Օսման աղան դիմում է այդ սուտ մարդարէին և յայտնում է որ ինքը սոննի մահմէդական է, և միևնոյն ժամանակ էմիր է: Ճշմարիտ հաւատի փառքը բարձրացնելու համար հրաշագործ մարդարէն պաշտպանում է նրան, և վերջապէս Օս-

ման աղան ազատուում է գերութիւնից առանց փրկանք տալու և իսկոյն ճանապարհուում է դէպի Մէշհէդ, ուր բարեբախտաբար նա հանդիպում է միջանի բաղդադցի վաճառականների, որոնց մէկը նրա հետ խնամի լինելով, մի փոքրիկ գումար է տալիս նրան առևտուր սկսելու համար: Վաճառականները նրան շատ խրախուսիչ պատմութիւններ են անում տաճկական բազարներում ծախուող Բոխարայի վաճառքների մասին: Նա իսկոյն գնում է Բոխարա ապրանք գնելու: Թիւրքմէնների մէջ երկար ժամանակ ապրած լինելով, նա շատ կարևոր բաներ է ստանձնասիրում նրանց վարքերի, սովորութիւնների և մասնաւորապէս նրանց առևտրի մասին, ուստի, նա կարողանում է այնքան մեծ յաջողութեամբ վաճառականութիւն անել Բոխարայի և Պարսկաստանի մէջ, որ նա բաւական հարստանում է վերադառնալու իր հայրենիքը:

Այժմ նա ճանապարհորդում էր դէպի Ստամբուլ, իր հետ տանելով շատ ուղտաբեռ անրանք Բոխարայից, Սամարղանդից և արևելեան Պարսկաստանից: Նա ղիտաւորութիւն ունէր այդ ապրանքներն այնտեղ վաճառելուց յետոյ վարադառնալ Բաղդադ: Նա յայտնեց, որ մտածել էր Թէհրանում մնալ մինչև զարնան կարաւանի հաւաքուելը և այդ միջոցում վայելել մաշրաքաղաքի վայելչութիւնները, քանի որ երկար ժամանակ մնալով վայրենիների (այդպէս էր նա անուանում թիւրքմէններին) մէջ, նա զրկուել էր բոլոր վայելքներից: Նա ինձանից հետաքրքրուեց, թէ ինչպէս անցկացնէր իր ժամանակը, որպէսզի որչափ հնարաւոր էր՝ հաճելի, ախորժելի լինէր իրան համար:

Եւ իսկոյն յիշեցի ինձ յանձնուած երեք մոնթիւնները և արդէն իմացած լինելով որ Օսման աղան ամուսնութեան մեծ պաշտպանն է, ուստի առանց դանդաղելու նրան առաջարկեցի ժամանակաւորապէս ամուսնանալ:

«Անշուշտ, մտածեցի ես, ոչինչ բան երբեքիցէ այնքան զօրեղ կերպով չէ հաստատուած՝ ինչքան նախասահմանութեան վարդապետութիւնը այս դէպքում: Ահա, իմ աղաներից մէկը գալիս, հասնում է մի հեռու վայրից ամուսնանալու իմ միւս ազայի այրիի հետ, այն աղայի՝ որը կասես թէ հէնց լաւ ժամանակին մեռնում է, որպէսզի այս հանդիպումը լինի, մինչև զեռ ես էլ առաջ եմ գալիս յաջողացնելու այդ ամուսնութիւնը:

Հաքիմ բաշու այրին ամենագերն էր, ուստի առանց երկբայութեան ես նրան առաջարկեցի Օսմանին: Նա իսկոյն ընդունեց առաջարկս: Հարսնացուի անձը արևելեան ճաշակի համեմատ նկարագրելով, յատկապէս հիացմամբ խօսելով նրա յօն-

քերի մասին և ըստ կարելոյն մեղմացնելով նրա բնաւորութեան դաժանութիւնը, ինձ յաջողուեց փեսայացուի սիրտը շահել դէպի հաքիմ բաշու այրին:

Այսքանը յաջողացնելով, ես շտապով գնացի մոլլա Նահանի մօտ, և նրան յայտնեցի եղելութիւնը: Նա անչնափ ուրախացաւ, և ինձ հրահանգներ տուեց թէ ինչպէս պէտք էր գործը առաջ տանել: Նա ասաց, որ ամուսնութիւնն օրինաւոր դարձնելու համար հարկաւոր էր վէքիլներ (ներկայացուցիչներ) նշանակել, մէկը կնոջ կողմից, միւսը մարդու, և որ կնոջ վէքիլը առաջագոյն ընդունելով ամուսնութեան պայմանները, պիտի արաբերէն լեզուով հետեւեալ հարցը տար փեսայի վէքիլին.

— Դու համաձայնո՞ւմ ես հոգիդ նուիրել ինձ այս ինչ պայմաններով:

— Այո, համաձայնում եմ, կը պատասխանի միւս վէքիլը: Այս հարց ու պատասխանից յետոյ մարդն ու կին օրինաւոր ամուսիններ են համարուում:

Մոլլա Նահանն առաջարկեց որ կնոջ կողմից ինքը վէքիլ դառնար, իսկ Օսմանի կողմից՝ ես: Նա բոլորովին թողեց իմ խելքին ու հնարագիտութեանը, որ որչնափ կարողանայի՝ փեսայից մեծ վճար ստանայի մեզ համար:

Ես անմիջապէս այս ուրախ լուրը տարայ խանումի համար (հաքիմ բաշու այրի կնոջը ես դեռ խանում եմ կոչում), որը գրգռեց իր ընկերուհիների նախանձը, որովհետեւ նա իր յաջողութիւնը վերագրեց իր գերագոյն գեղեցկութեանը և իր հոգատարութեան ամենամեծ առարկային—իր միացած յօնքերին: Բայց, թերեւ ընթերցողը կ'ենթադրէ, նա մի վախ, մի տարակուսանք ունէր. այն է, որ նա կասկածում էր թէ ինքը բաւական գեր չէր երեւալ տաճիկ փեսայացուի աչքում, նա նաեւ կասկածում էր, որ իր աչքերը չէին կարող պայծառ երեւալ, որովհետեւ այնքան թանձր ծարերով սեւացրել էր իր արտեանունքները:

Նրա մօտից հեռանալով, գնացի Օսման աղայի մօտ: Բարբի մարդ, նա էլ էր զինւում գրաւելու, յաղթելու. նա կարծես թէ մտածում էր, որ երկար ժամանակ ուղտերի մէջ մնալով՝ այնպէս բնութիւնակից էր դարձել նրանց և այնպէս սովորել էր նրանց պէս ապրել, որ այժմ մուշկ և ամբրգրիս (ambergris) անուշահոտութիւններին յարմար մի առարկայ էր դարձել...

Հետեւապէս նա գնաց բաղնիք, ուր լողացաւ, սև փայլուն գոյնով ներկեց իր ալեխառն մօրուքը, կարմրացրեց իր ձեռները, և բեխերը ոլորեց վեր դէպի աչքերի անկիւնները փոխարէն

ցած դէպի բերանի անկիւնները, ինչպէս սովորաբար նա ա-
նոււ էր: Ապա հազնելով իր ամենալաւ շորերը՝ հետո եկաւ
մոլլա նազանի տունը, ուր, իր կերպարանափոխութեան շնոր-
հիւ, նա իրան գոնէ տասը տարով աւելի պակաս տարիքով
մարդ ցոյց տուեց:

Մի չէզոք մարդու համար շատ զուարճալի կը լինէր տես-
նել Օսմանի և խանուսի առաջին հայեացքները միմեանց հան-
դիպելիս: Փեսան աշխատում էր տեսնել թէ ինքը ինչպիսի
կնոջ հետ էր ամուսնանալու, իսկ խանումը շարունակ խորա-
մանկութեամբ խաղալով իր քօղի հետ, աշխատում էր հաւա-
տացնել նրան, որ իր քօղի տակ թաքնուած էր հրեշտակային
գեղեցկութիւն: Բայց ես, այդ ժամանակ այնքան զբաղուած
էի իմ մտածմունքներով, որ ոչինչ զուարճութիւն չզգացի:
Աւելի քան մի անգամ միտս ընկաւ այն 50 դուկատը, որ մի
ժամանակ Օսման աղայինն է եղել, բայց յետոյ իմ սեփակա-
նութիւնն է դարձել, և ես վախենում էի որ գուցէ նա էլ միև-
նոյն ժամանակ մտածէր այդ փողի վրայ, և եթէ նա յանկարծ
դժգոհէր և բարկանար, ո՞վ գիտէ ինչ մոխիր կը թափուէր
գլխիս:

Վերջապէս նրանք ամուսնացան, և ես հաւատացած եմ
որ իր բոլոր ջանքերից յետոյ Օսմանն ամենևին չկարողացաւ
տեսնել իր կնոջ դէմքը, մինչև որ ես արտասանեցի «ես հա-
մաձայն եմ» ահեղ բառերը, որից յետոյ նա անհամբերութեամբ
բռնեց, յետ քաշեց նրա քօղը, և կարիք չկայ ասելու, որ նա
չյափշտակուեց, չուշաթափուեց անպատում բերկրանքի:

Խեղճ Օսման. երբ նա տեսաւ որ իր կինն իր երևակա-
յած Զուլէյխան չէր, ինձ իր մօտ կանչեց՝ և ասաց.

— Հնա՛յի, ես կարծում էի որ նա գոնէ ջահիլ կը լինէր,
բայց նրա երեսի խորշումներն աւելի շատ են քան որևէ մի
ուղտինը. այդ ի՞նչպէս է:

Որքան հնարաւոր էր, ես աշխատեցի պատասխանատու-
թիւնից ազատուել, հաւաստիացնելով նրան որ խանումը մի
ժամանակ արքունական հարեմի ծաղիկն էր եղել. և յիշեցրի
նրան, որ ամուսնութեան խնդրում ոչինչ բան այնքան գործ
չունի, ինչքան ճակատագիրը:

— Ա՛խ, այդ ճակատագիրը, բացազանչեց նա. դա ամեն
բանի, ամեն խօսքի պատասխան է դառնում: Թող դրա հետե-
ւանքը լինի ինչ որ ուզում է, բայց դա չէ կարող պառաւ
քաջթառին ջահիլ կին դարձնել, ինչպէս որ չէ կարող մէկի
վրայ մէկ աւելացնելով՝ երեք դարձնել:

Ես սաստիկ վախենում էի որ մի գուցէ նա բեկանէր իր

պայմանները. բայց երբ նա տեսաւ որ անկարելի էր դրանից աւելին սպասել մոթիններէց, որոնք կին սեռի խոտանը, անպիտան մասն են կազմում, որոնք պառաւ այրիներ են կամ իրանց ամուսինների աչքից ընկած, դէն արուած, լքուած կտնայք, որոնք աւելի լաւ են համարում ապրել որեւէ մի փողոցային մարդու հետ որպէս ամուսնու, քան վարել անմարդ կեանք, որ ամօթ և նախատինք է համարուում մահմէդական երկրներում—այո՛, երբ նա նկատեց այդ բոլորը, անճարացած համաձայնեց նրան տանել իր մօտ:

Ես ակնկալում էի, թէ ինչպէս քաղցած որսկան բազէն, որ երբ նրա գլխանոցը վերցնուում է, յարձակուում է իր որսի վրայ, այնպէս էլ Օսման աղան իր կնոջ դէմքը տեսնելով իսկոյն կը վերցնէր կը տանէր իր սենեակը, սակայն այդպէս չեղաւ, նա նրան ասաց որ գնար իր մօտ երբ որ կամենար, և ինքը յամրաքայլ գնաց քարվանսրան:

ԳԼ. ԾԳ.

Մոլլա Նազանն իր փառասիրութեամբ Թշուստացնում է Թէ իրան և Թէ իր աշակերտներին:

Աւելի մօտից ծանօթանալով մոլլա Նազանի հետ և ուսումնասիրելով նրա բնաւորութիւնը, ես տեսայ որ նա ոչ միայն ամենաընչաքաղց՝ այլ և ամենափառասէր մարդն էր, և որ նրա միակ նպատակն էր թէհրանում մոլլա բաշի դառնալ: Այդ նպատակին հասնելու համար նա շատ ծրագիրներ էր կազմում, շատ մեծ ջանքեր էր անում; և ամեն տեսակ փորձեր էր անում ժողովրդի աչքում նշանաւոր դառնալ և համարուել որպէս ճշմարիտ հաւատի ամենաեռանդուն պաշտպանն ու նոյն հաւատի թշնամիների հալածողը:

Նա փիշ նամնազ (աղօթքների առաջնորդ) էր գլխաւոր մզկիթում, նա դասախօսութիւններ էր անում մադրասաներում և երբ կարողանում էր, քաջալերում էր դատախազներին իրան դիմելու նրանց վէճերին վերջ տալու համար: Ամեն անգամ, մանաւանդ նո ըուզի (ամանօր) տօնին, երբ բոլոր մոլլաները գնում են շնորհաւորելու Շահին և նրա ներկայութեամբ աղօթելու նրա աջողութեան համար, նա միշտ մի հնարք էր գտնում աչքի ընկնելու իր շողորթութիւններով և աշխատում էր իր մեծագոյ ձայնը միւսների ձայներից աւելի զօրեղ և լսելի դարձնել:

Այսպիսի հնարքներով նա բաւական մեծ անուն ու պատիւ շահեց ժողովրդի մէջ, թէպէտ նրանք՝ որ նրան աւելի լաւ էին ճանաչում, այնքան էլ կարեւորութիւն չէին տալիս նրան: Մի դէպք պատահեց որ լաւ հաստատում է այս, և որը, ինչպէս ես կը պատմեմ, բոլորովին մի նոր շրջան տուեց իմ բախտի անուին: Այսպէս պատահեց:

Ձմեռը վերջացել և գարունքից էլ բաւական անցել էր, երբ լուր հասաւ մայրաքաղաքը, որ Պարսկաստանի հարաւային նահանգներում, մասնաւորապէս Լար և Փարսում, անձրևի անցնելու մի կատարեալ բացակայութիւն էր եղել, որ՝ բնակիչները սկսել էին սաստիկ վախենալ սովից: Տարին հոլովուեց, և սովի սարսափը տիրապետեց հիւսիսային կողմերում: Առաջ եկաւ մի երաշտութիւն, որի նմանը դեռ չէր տեսնուած, և որը տխուր, չարագուշակ մտածմունքների մէջ ձգեց ժողովրդին: Շահը հրամայեց որ բոլոր մզկիթներում աղօթքներ վերադառնան անձրևի համար, և մոլլա բաշին մեծ փութաշանութեամբ գործադրել տուեց այդ հրամանը:

Իմ աղան՝ մոլլա Նադանն էլ լաւ առիթ ունեցաւ ապացուցանելու իր կրօնական խանդն ու եռանդը և աչքի ընկնելու իր ճիգ ու ջանքերով: Նա իսկոյն սկսեց շարժուել իր բոլոր կարողութեամբ: Վստահելով ժողովրդի վրայ իր ունեցած ազդեցութեան վրայ, նա մի քիչ էլ աւելի հեռուն գնաց քան իր հակառակորդը — մոլլա բաշին, և հաւաքելով ստորին դասակարգից մի մեծ բազմութիւն՝ գնաց քաղաքից դուրս և մի ընդարձակ վայրում աղօթք մատուցեց Ալլահին:

Երաշտը շարունակուեց, և Շահը հրամայեց բոլոր դասակարգի մարդկանց մասնակցելու մոլլա Նադանի աղօթքներին: Նադանը տեսնելով որ Շահը այդպէս մի հրաման արձակեց, շատ ուրախացաւ և սկսեց աւելի մեծ եռանդով գործել: Նա ստիպեց բոլոր քրիստոնեաներին, հրէաներին, գաղթելին, ինչպէս և բոլոր մուսուլմաններին, մասնակցել իրան և աղօթել անձրևի համար: Ի վերայ այդքան մեծանալի, երկինքը շարունակեց անողորմելի մնալ — անձրև չեկաւ, ժողովուրդը այլևս յուսահատուեց, բայց մոլլա Նադանը կրկնապատկեց իր փութաշանութիւնը:

Վերջապէս, մի առաւօտ երբ եղանակը սովորականից աւելի տոթագին էր, նա իր տան առաջ հաւաքեց մի մեծ ամբոխ և խօսեց նրանց հետ համարեա այսպէս.

«Ո՛վ թէհրանցիներ, այլևս ուրիշ հնար չկայ, որով կարողանանք ի բաց դարձնել այն սարսափելի թշուառութիւնը, որ սպառնում է մեր երկրին: Յայտնի է, որ երկինքը խոժոռուել

է մեզ վրայ, և որ այս քաղաքում կան մարդիկ, որոնց մոլութիւնների և յանցանքների համար ամենակարող Ալլահը անտարակոյս վրէժխնդութեամբ կը պատժի մեզ: Եւ գիտէ՞ք ովքեր են այդ մարդիկը—այդ քաֆիրները, այդ, օրինազանցները, այդ թշուառականները՝ որոնք պղծում են մեր պատերի սրբութիւնը, արձակ-համարձակ խմելով գինին—մի խմիչք, որի գործածութիւնը խստիւ արգելել է սուրբ մարգարէն (խաղաղութիւն և օրհնութիւն նրան),—և մեր փողոցները իրանց մոլութիւնների տեսարաններն են դարձրել: Եկէ՛ք գնանք, հետեցէ՛ք ինձ, գնանք այն տեղը՝ ուր ապրում են այդ պիղծ, դարշիկ գինարբուները. ջարդենք նրանց կարասները և դրանով գոնէ վերցրած կը լինենք այն պատճառներից մէկը՝ որ Ալլահին այսպէս խտացրել է մեզ դէմ»:

Մուլա Նազանի այս խօսքերի վրայ ամբոխը յուզուեց, աղմկեց: Մուհամմադութիւնը, մի մուհամմադութիւն՝ որի նմանն ես չէի կարծում թէ կարող էր գոյութիւն ունենալ որեւէ մարդու կրծքում, բռնկեց ամենախիստ արտայայտութիւններով—արտայայտութիւններ՝ որոնց իսկոյն հետեց կատաղի զազանութիւն:

Նազանը շարունակելով իր գրգռիչ ճառը, առաջ անցաւ. մոլեգնած ամբոխը հետեց նրան, հետեցի և ես՝ որ նոյնքան կատաղի ֆանատիկոս էի դարձել, ինչքան միւսները, և նա մեզ առաջնորդեց դէպի հայոց թաղը:

Հայերը՝ այդ խաղաղակեաց քրիստոնեաները, տեսնելով, որ մոլեգնած մուսուլմանները յարձակուելու էին իրանց վրայ, շփոթուեցին, չիմացան ինչ անել: Ոմանք ամրացրին իրանց տան դռները, ոմանք փախան, և ոմանք էլ ցից հանուածների պէս հէնց իրանց տեղերում դամուած մնացին: Սակայն նրանք երկար չմնացին տարակուսանքի և երկբայութեան մէջ, որովհետեւ մենք շուտով սկսեցինք յարձակուել նրանց վրայ քարերի այնպիսի տարափներով և անէծքների ու լուտանքների այնպիսի զայրազին աղաղակներով, որ ահաբեկուած հայերը ընդհանուր կոտորածից զատ՝ ոչինչ չսպասեցին մեզնից:

Մուլա Նազանը և Յիւսէփ խումբ ամենակատաղի, ամենամոլեռանդ մուսուլմաններ մտան գլխաւոր հայերի տները և սկսեցին խուզարկել ամեն ինչիւն գինի գտնելու համար: Նրանք ոչինչ տարբերութիւն չդրին նրանց կանանց և հասարակաց սենեակների մէջ, այլ՝ անխնայ, անխտիր կերպով կոտորեցին, ջարդեցին ամեն դուռ և երբ նրանք գտան գինու կարասները, էլ ի՞նչ ասեմ, թող ընթերցողը երեակայի թէ դժբախտ հայերը որքան տուժեցին: Նրանց կարասները փշուր-փշուր եղան, գինին ըս-

Պսեղ հոսել ամեն կողմից, և խեղճ տէրերը բացի հանդիսատեսի դեր կատարելուց և իրանց ձեռները վշտալից սրտով ճակելուց՝ ուրիշ ոչինչ չկարողացան անել:

Մինչ այս արարողութիւնը կատարոււմ էր հայերի տներում, ամբոխի կատաղութիւնը այն ծայրայեղութեանը հասաւ, որ նրանք գրոհ տուին նրանց եկեղեցու վրայ, դուռը կոտորեցին, ներս թափուեցին, պատուտեցին, ջարդեցին, փռեցին ամեն բան—գրքեր, խաչելութիւններ, զգեստներ, զարդեր. և որովհետեւ այդպիսի դէպքերում գողերի պակասութիւն չկայ, շուտով իմացուեց, որ եկեղեցապատկան արժէքաւոր իրերի մեծ մասըն էլ գողացուել էր:

Աւերածը կատարեալ դարձաւ. ամեն բան զոհ գնաց կատաղի ամբոխի գազանութեանը. մնացին միայն դժբախտ հայերը, որոնց էլ գուցէ շուտով կը կոտորէին, եթէ վրայ չհասնէին Շահի ոստիկաններից մէկը և միքանի ականաւոր հայեր, որոնց ներկայութիւնը գրեթէ բոլորէր խելքի բերեց ամբոխին:

Իրանց գործած վայրենութիւնների հետևանքից վախենալով, Նադանի հետևողները իսկոյն յետ քաշուեցին, թողնելով արժանապատիւ մոլլային և ինձ կանգնելու Շահի ոստիկանի առջև: Ընթերցողը կը տեսնի, որ մեր զգացումները այնքան էլ նախանձելի չէին, երբ ոստիկանը մեզ յայտնեց, որ Նորին Վեհափառութիւն՝ արքայից արքան պահանջում էր, որ մենք անմիջապէս ներկայանայինք իրան: Նադանն ինձ հայեց, ես նշարան: Թերևս երկու մօրուքաւոր մարդիկ դեռ այնքան ապուշների կերպարանք չէին ստացել ինչպիսին ստացանք մենք այդ բոլորին: Նա աշխատեց ժամանակին և հանգամանքին յարմարուել, և խնդրեց ոստիկանից իրան հետ գնալ իր տունը, որպէսզի հագնէր իր կարմիր գուլպաները, յետոյ ներկայանար Շահին, բայց ոստիկանը շատ չոր կերպով ասաց.

— Կարմիր գուլպաներ հագնելու առիթ չկայ:

Այս խօսքերի վրայ Նադանը ահուդողի մէջ ընկաւ, և պիտի խստովանուած, որ ինքս էլ նրանից պակաս չվախեցայ:

— Յանուն Մարգարէի, ասացէք, ես ի՞նչ եմ արել, բացազանչեց նա: Չէ՞ որ մեր հաւատի թշնամիները պիտի տապալուեն, դարձաւ նա ոստիկանին:

— Դժուր կ'իմանաք, պատասխանեց «բռունցքների անթափանցելի մարդը»:

Մենք վերջապէս հասանք արքունիքը, որի մուտքի մօտ գտնուող դահճապետի սենեակում նստած էին մեծ վէզիրն ու

մոլլա բաշին: Մենք կանգնեցինք պատուհանի առաջ, և մեծ վեզիրը մոլլա Նադանին տեսնելով ասաց.

— Յանուն Ալիի, այս ի՞նչ ենք լսում մենք. արդեօք զը-
թմեւ ես, թէ՞ մոռացել ես, որ Թէհրանում թագաւոր կայ:

— Ապա իսկից ես, ասաց մոլլա բաշին, որ դու համար-
ձակուում ես ժողովրդին գրգռել, առաջնորդել անհաւատներին
զէմ:

— Դրանց իսկոյն տարէք Շահի մօտ, ասաց դահապետը,
վեր կենալով և վերցնելով իր պաշտօնական գաւազանը: Դուք
չպիտի երկար սպասեցնէք տիեզերքի կենտրոնին:

Աւելի մեռած քան կենդանի՝ մենք անցանք ծառուղիների
միջով և մի փոքրիկ, ցած դռնով մտանք մի պարտէզ, ուր
մի վերնայարկում նստած էր Շահը: Մօտենալիս, ես տեսայ
որ օգոստափառ վեհապետը ոլորում էր իր բիսերի ծայրերը,
որ միշտ բարկութեան նշան է համարւում: Ես աչքերս դար-
ձրի Նադանի վրայ. նա լողում էր քրտինքի մէջ: Շահի առաջ
հասնելով՝ մենք հանեցինք մեր կօշիկները և խորին պատկա-
ռանքով ու ակնածութեամբ առաջ դնացինք մինչև մարմարեայ
աւազանի պոռնակը: Խումբը, որ այժմ կանգնած էր արքայից
արքայի առջև, բաղկացած էր մոլլա բաշուց, դահապետից, մէկ
հայից, Նադանից և ինձանից: Դահապետը վայր դնելով իր
պաշտօնական գաւազանը, մինչև գետին խոնարհուեց Շահի ա-
ռաջ և նրա հետ խօսելու սովորական յառաջաբանը վերջացնե-
լով՝ ասաց.

— Ահա, սա է մոլլա Նադանը, և սա էլ (ցոյց տալով ինձ)
նրա ծառան է:

— Ասա, մոլլա, ասաց Շահը շատ մեղմ ձայնով, ասա,
ի՞նչքան ժամանակ է, որ դու սկսել ես կործանել իմ հպատակ-
ներին: Ո՞վ է քեզ տուել այդ իշխանութիւնը: Դու մարգարէ
ես դառել, թէ՞ գուցէ բարեհաճում ես թագաւոր դառնալ: Ասա,
մարդ, այդ ի՞նչ ղալաթներ (յանցանքներ) ես անում (գոր-
ծում):

Մեղապարտ Նադանը, որին ուրիշ ժամանակներում բառ-
չէր պակասում, այստեղ ի՞նչ մի կարգին խօսք չկարողացաւ ա-
սել: Նա միայն թոթովեց միքանի կցկտուր խօսքեր՝ անհաւատ-
ների, զինու, երաշտի մասին և յետոյ լռեց ու անշարժ մը-
նաց:

— Ի՞նչ է ասում այդ մարդը, հարցրեց Շահը մոլլա բա-
շուց. ես չկարողացայ հասկանալ թէ դա ի՞նչից է ստացել իր
իշխանութիւնը այդպիսի յանցանքներ գործելու համար:

— Դուրբանդ լինեմ, պատասխանեց մոլլա բաշին. նա ա-

սուս է, որ իբր թէ ինքը գործել է յօգուտ ձեր հպատակների, որոնք երաշտի պատճառով նեղութեան մէջ են: Նա ասում է, որ ձեր ժողովուրդը չէ կարող անձրև ունենալ, քանի որ անհաւատները գինի են խմում թէհրանում:

— Օհ, ուրեմն դու ջարդում, կործանում ես իմ հպատակների մի մասը, յօգուտ մնացածի, ասաց Շահը: Ասա, մարդ, ուրեմն ես ոչինչ եմ համարում եմ մայրաքաղաքում: Միթէ մէկը կարող է այդ մի բուռ անհաւատ շներին իմ ըթի տակ ոչնչացնել, առանց ինձանից իրաւունք, իշխանութիւն խնդրելու: Ոստի, մարդ, այդ լինչ երազ ես տեսել. երևի ուղեղդ չորացել է: Մենք, շարունակեց Շահը՝ ձայնը բարձրացնելով, մեր տէրութեան մէջ մի մարդ ենք. քաջէրները իրանց քաջէր լինելով պիտի տեսնեն այդ, պիտի տեսնեն, որ այդ, մենք մի մարդ ենք: Ֆէրրաշներ, իսկոյն վերցրէք սրա չալման, հանէք վերարկուն, փետեցէք մօրուքը, կապեցէք թևերը և իրան դրէք մի էշի վրայ՝ երեսը դէպի պոչը դարձրած, ման ածեցէք փողոցներում, յետոյ դուրս քշեցէք քաղաքից և թողէք դրա յուսալից աշակերտն էլ (մատնացոյց անելով ինձ) արտաքսուի նրա հետ:

Երջանիկ, բախտաւոր էի ես, որ ոչոք չճանաչեց ինձ. և չիմացաւ որ ես էի եղել տարաբախտ Զինաբի սիրականը, եթէ ոչ բուրդա կը գողուէր: Համեմատաբար ես դրախտի մէջ էի և Նադանը դժոխքի, որովհետեւ ոչ մի հրաման դեռ այդպէս անմիջապէս և ճշտութեամբ չէր կատարուել, ինչպէս կատարուեց Շահի այս հրամանը:

Ֆէրրաշները թափուեցին Նադանի վրայ, հաւի փետուրների նման դուրս տուին նրա մօրուքը, ապա ուժգին բռնուցքներով մեզ դուրս քշեցին պալատից, տարան փողոցը ուր մի էշ տեսնելով, խլեցին իր տիրոջից և երբեմն հպարտ ու փառասէր մոլլա Նադանին նրա վրայ դնելով՝ ման ածեցին բոլոր փողոցներում: Իմ չալման ու վերարկուն էլ վերցրին, և ես սգուորի պէս գլխիկոր հետևեցի էշի յամբ քայլերին:

Քաղաքի դռների մէկի մօտ հասնելով՝ ֆէրրաշները իջեցրին Նադանին, և երկուսիս էլ գրեթէ բոլորովին մերկացնելով՝ արտաքսեցին, քշեցին դէպի ամայի անապատը, և զարմանահալ, հաղիւ թէ մենք հեռացել էինք քաղաքի դռնից՝ անձրևն սկսեց յորդութեամբ տեղալ. կարծես թէ երկինքն էլ սպասել էր ականատես լինելու այն խայտառակութեանը՝ որ եկաւ Պարսկաստանի ամենամեծ աւազակների գլխին, և ցոյց տալու մոլլա Նադանի խաբեբայութիւնը՝ յօգուտ խեղճ հարստահարուած հայերի:

Գլ. Ծէ.

Հացի Բարան րաղնիքում հասնողպում է մի տարօրինակ արկածի՝ որ հրաշապէս ազատում է նրան յուսահատութեան անուղղորդից:

— Ուրեմն, ասացի ես ընկերիս երբ մնացինք ինքն ու ես, այս իմ փոքրիկ երջանկութեան համար ես պարտական եմ քեզ: Աւանդ, եթէ ես նախապէս իմացած լինէի որ Ղումի մուշտահիդի յանձնարարութեան հետեանքն այս արկածը, այս դժբախտութիւնը կը լինէր՝ դու ամենևին Հացի Բարային այս վիճակի մէջ չէիր տեսնիլ: Ախր, ես չեմ հասկանում թէ քո լինչ գործդ էր, քեզ ինչ թէ անձրև կը գար կամ չէր գար, կամ թէ հայերը հարբում են՝ թէ լուրջ են մնում: Հիմա տես, տես թէ այդ խնդիրները, գործերի մէջ քիթդ խոթելդ մեզ լինչ օրի հասցրեց, լինչ շահ բերեց մեզ համար:

Մուլա Նադանի գրութիւնն այնքան եղկելի էր, որ ես խղճացի նրան և չուզեցի այլևս կշտամբել: Մենք կողաուկող քայլեցինք առաջ լուռ և ցաւատանջ սրտով՝ մինչև հասանք մեր ճանապարհի վրայ ընկած առաջին գիւղը, ուր կանգ առանք մտածելու մեր անելիքի մասին: Տարաբախտ ընկերս արտաքսուած էր Թէհրանից, ուստի անհնար էր նրան կրկին երևալ այն տեղ, մինչև որ փոթորիկն անցնէր. քայց որովհետև երկուսս էլ շատ մտահոգ էինք իմանալու թէ ինչ էր պատահել մեր ստացուածքին—նրա տանն ու գոյքին՝ իսկ իմ շորերին, փողին և ջորուն—ուստի վճռեցինք որ ես ծածկաբար վերադառնայի քաղաքը և մի բան տեղեկանայի:

Երեկոյ էր երբ մտայ Թէհրան: Ես աշխատեցի, որքան կարելի էր ինձ ճանաչել չտալ: Փողոցների պատերի տակով, սուս-փուս, գողի պէս գնացի մինչև Նադանի տան դուռը, որի վրայ աչքս ընկաւ թէ չէ, իսկոյն իմացայ որ էլ բան չէր մընացել մեզ համար: Տունն ընկել էր յափշտակիչ հրէշների մի բազմութեան ձեռք, որոնք ազատ համարձակ իւրացնում էին ինչ որ ձեռքներն էր ընկնում: Առաջին մարդը որին ես հանդիպեցի, և որը դուրս էր գալիս տանիցը՝ նոյն ֆէրրաշն էր որ մեզ տարաւ Շահի մօտը. նա հեծել էր իմ շորին և իր առջևը դրած էր մի մեծ բողջայ որ անկասկած իմ կամ Նադանի շորերն էին:

Այս տեսարանը այնքան վատ ազդեց ինձ, և ես այնքան վախենում էի ճանաչուելուց, որ շտապով հեռացայ այդ տեղից և չիմանալով թէ որտեղ էի գնում՝ յանկարծ ինձ գտայ

մի բաղնիքում, որ ընկած էր մեր թշնամի մոլլա բաշու տան մօտ:

Ես ներս մտայ, շորերս հանեցի. մուլքը կոխած լինելով, բաղնիքում ծառայողներից ոչ մէկը չտեսաւ ինձ: Մտնելով առաջին տաք սենեակը՝ անցայ մինչև վերջինը և ամենատաքը, ուր մի մութ անկիւնում, որտեղ ոչոք չէր կարող նկատել ինձ, նստեցի և սկսեցի զբաղուել իմ մտածմունքերով: Ես մտածեցի թէ մեզ պատահած դժբախտութիւնից յետոյ էլ ի՞նչ միջոցի պէտք է դիմէի ապրուստս հայթայթելու համար: Բախտը իսպառ երեսի վրայ էր գցել ինձ, և կարծես թէ ես դարձել էի զարնուած եղջերուն—տարաբախտութեան ընտրեալ որսը:

«Հազիւ թէ սկսում եմ սիրահարութիւն անել, մտածեցի ես, Շահը գալիս, հակառակորդ է դառնում, սպանում է սիրունուս և պաշտօնազուրկ է անում ինձ: Ես հարազատ ժառանգ եմ դառնում մի մարդու՝ որի հարստութիւնը աներկբայի է, և որը այնքան ապրում է՝ մինչև ես վրայ եմ հասնում, և նա ինձ ընդունում է իր ժառանգը, և թէպէտ ամեն մարդ ինձ ասում է որ ես պիտի հարստանամ, այնուամենայնիւ խաբուելու դժբախտութիւն եմ ունենում ու աւելի աղքատանում եմ: Պարսկաստանի ամենամեծ և ամենաբարեպաշտ մարդը սիրում, հաւանում է ինձ և մի գործ է ճարում ինձ համար՝ որից երջանկութիւն ու հանգստութիւն եմ սպասում մինչև կեանքիս վերջը: Իմ աղան թի չարաբաստ ժամանակ աղօթում է որ երկինքն առատ բարիքներ շնորհի մեզ, բայց այդ բարիքների փոխարէն՝ երկինքը վրէժ է լուծում մեզանից, արտաքսում ենք քաղաքից և զրկում ենք մեր ստացուածքից»:

Բաղնիքի անկիւնում նստած՝ ես գումարեցի իմ դժբախտութիւնները և տեսայ, որ ոչոքինը իմից շատ չէր: Աշխարհը ինձ համար այլևս նշանակութիւն չունէր, և ես ցանկանում էի ոչ այլ ինչ՝ եթէ ոչ մեռնել նոյն անկիւնում, ուր ես բոյն էի դրել:

Բաղնիքում էլ ոչ մի լողացող չկար. բոլորն էլ գնացել էին: Մինչդեռ իմ տեղում նստած մտածում էի, յանկարծ բաղնիքի լուռութիւնը վրդովուեց և ահա որոշ աստիճան շքով մի մարդ ներս մտաւ: Այնտեղ վառուող ճրագի աղօտ լուսով՝ ես ճանաչեցի նրան. նա մոլլա բաշին էր: Ո՛չ նա տեսաւ ինձ, ոչ էլ նրա ծառաները, և հէնց որ նա մենակ մնաց (ծառաները դուրս գնացին և նա կարծում էր թէ բաղնիքում ոչոք չկար), իսկոյն մտաւ տաք ջրի աւազանը կամ խազինէն (գանձարանը) ինչպէս դա կոչւում է պարսիկների բաղնիքում:

Մի քիչ ժամանակ ես ականջ դրի. նա իր բոլոր ուժով փնչում էր և ջուրը չլիացնում—մի տեսակ խաղիկութիւն՝ որ իմ կարծիքով անսպասելի էր նրա պէս լուրջ և խաղաղ բնավորութիւն ունեցող մարդուց: Քիչ յետոյ էլ ես լսեցի շարժուելու մի շատ անսովոր ձայն, որին հետեւեց կոկորդի կլկլոց ու խոխուոց: Ես կարծեցի թէ նա մի արտաքոյ կարգի մարմնամարզութիւն էր անում: Հետաքրքրութիւնիցս կանգնեցի և շատ զգուշութեամբ ոտներիս մատների վրայ քայլելով՝ դնացի այն բացուածքի մօտ, որ նայում է աւազանի մէջ, ներս նայեցի, և, ո՛վ սարսամի, ի՜նչ եմ տեսնում—մոլլա բաշու գլուխը որ տատանում էր ջրի երեսին: Ըստ հրեայթին, նա վերջին շնչումն էր և չէր կարող ազատուել: Պարզ էր որ նա յանկարծական հիւանդութեամբ կամ վերնոտութեամբ էր բռնուել և չկարողանալով օգնութեան կանչել իր ծառաներին՝ խեղդուել էր:

Այս չար դիպուածի բոլոր սարսափելի հետեանքները ըսկսեցին անքթիթ նայել երեսիս: «Այլևս, մտածեցի ես, ի՜նչն է կարող արգելք դառնալ չթողնել որ ես համարուեմ սրա խեղդողը: Ամեն մարդ գիտէ թէ մոլլա Նազանը՝ աղաս ի՜նչպէս լարուած էր սրա գէմ, և բնականաբար ես պիտի համարուեմ նրա նախանձի և ռիսկալութեան գործիքը:

Մինչ այդպէս մտածում էի, կանգնած այն աստիճանի վրայ որ իջնում էր աւազանի մէջ, մոլլա բաշու ծառաները բաղնիքում ծառայողներից մէկի հետ ներս մտան, բերելով իրանց հետ տաքացրած մեծ դենջակներ, և տեսնելով որ մէկը կանգնած էր աստիճանի վրայ՝ բնականաբար կարծեցին թէ իրանց աղան էր որ դուրս էր գալիս ջրի միջից, և առանց խօսելու մօտեցան նրան (ինձ), մարմինս չորացրին, և տաքացրած մեծ դենջակով ծածկեցին ինձ: Մինչ նրանք զբաղուել էին հետս, ես մտածելու ժամանակ ունեցայ և նախագուշակեցի մի արկած՝ որը թերեւ ինձ անվտանգ դուրս կը հանէր այն դժուարութիւնից՝ որի մէջ ճակատագիրս գցել էր ինձ. ուստի թողի որ հանգամանքները գործէին ինձ համար, և իսկոյն վճռեցի ինձ ներկայացնել որպէս մոլլա բաշին:

Մի լամպ որ բարձր կախուած էր առաստաղից, միակ ճրագն էր որ շատ աղօտ կերպով լոյս էր տալիս զգեստաւորուելու սենեակումը, և որովհետեւ ես բարեբախտաբար հանգուցեալի հասակն ու մեծութիւնն ունէի, սւստի նրա ծառաները, որոնք ոչինչ չէին կասկածում, բնականաբար ինձ իրանց աղան կարծեցին մինչև վերջ: Մոլլա Նազանի տնում եղածս ժամանակ՝ ես բաւական լաւ ուսումնասիրել էի մոլլա

բաշու ձևերը, այնպէս որ ես այժմ կարող էի ճիշտ նրա ձևերը բանացնել մինչև տուն հասնելու: Պարբերայի դերի ամենագոյնէն մասը այն ժամանակ պիտի կատարէի, երբ կը հասնէինք անդէրունը, որովհետեւ ես բոլորովին անծանօթ էի այնտեղի դիրքին ու չէի իմանում թէ մոլլա բաշին ինչ յարաբերութեան մէջ էր իր կանանց իւրաքանչիւրի հետ: Ես մի անգամ լսել էի որ նա կատարեալ բռնակալ էր դէպի գեղեցեկ սեռը, և որովհետեւ նրա մասին շատ բաներ էր ասուել իմ ազայի տնում, իսկոյն յիշեցի որ մի անգամ լսել էի թէ նա շարունակ իր օրինաւոր կնոջ հետ կռիւ էր անում—կռիւ՝ որի պատճառն էր իր վարքից առաջ եկած նախանձը:

Ես գիտէի որ նա սակաւախօս մարդ էր. նա ընդհանրապէս իր մտքերը բացատրում էր անկապ նախադասութիւններով, և քանի որ նա միշտ սիրում էր արարական արմատ ունեցող բառեր գործածել, խօսելիս՝ նա իր կոկորդային ձայնով աւելի էր հարուածում իր ունկնդրի ականջները քան անում են բոլոր պարզ պարսկերէն խօսողները:

Ամբողջ ժամանակը որ ես հազնում էի շորերս, ոչ մի բառ չարտասանեցի և աշխատեցի, որչափ կարելի էր, երեսս ստուերի մէջ պահել: Երբ դայլանը մատուցուեց ինձ, ես ստացայ և ծխեցի ճիշդ մոլլա բաշու ձևով, այսինքն՝ երկու-երեք երկար շնչով ծուխը ներս էի քաշում, և յետոյ դուրս էի փչում նոյնքան երկար շնչով:

Ծառաներից մէկը կարծես թէ մի անսովոր բան նկատեց երբ ես Մօղա հաֆէզ*) ասացի բաղնիսպանին, բայց ամեն կասկած փարատուեց երբ նրանք՝ ծառաները օգնեցին ինձ հեծնել բաղնիքի դրան պատրաստ պահուած մոլլա բաշու ձին և զգացին ծանրութիւնս:

Հանգուցեալի տան դուռը հասնելով՝ ես հանդարտութեամբ իջայ, և թէպէտ չէի իմանում թէ որ անցքերով պիտի գնայինք, այնուամենայնիւ հետեւելով ծառաներից մէկին որ առաջնորդում էր ինձ և որը տան հաւատարիմն էր, հասայ մի փոքրիկ դուռ, որ բացուում էր անդէրունի մէջ: Ես թոյլ տուի նրան անել այն՝ ինչ որ անկասկած նրա ամեն օրուայ սովորութիւնն էր եղել, և հէնց որ նա դուռը բաց արեց ու ես երկու քայլ ներս անցայ, նա ձայն տուեց, չէրաղ Բիսրիդ (ճըրագ բերէք) ու ինքը վերադարձաւ:

Իսկոյն լսուեց կանանց մաշիկների կրունկների թրըլա-

*) Նշանակում է՝ Աստուած քեզ պահապան, մի խօսք՝ որ արտասանւում է որպէս ամաք բարովս:

թրխկոց, և շուտով երկու գերուհիներ իւրաքանչիւրի ձեռքին մի-մի ճրագ՝ վազելով դիմաւորեցին ինձ: Նրանք վազելով եկան, որովհետեւ ինչպէս երեւաց, մէկն աշխատում էր միւսից աւելի շուտ հասնել ինձ:

Շինութեան ամենամեծ սենեակը լուսաւորուած էր, և ես կարողացայ այնտեղ տեսնել մէկից աւելի կանայք: Այդ սենեակը իմ կարծիքով բնակարանն էր հանգուցեալ մոլլա բաշու աւագ կնոջ՝ որը այրի էր դարձել: Ես սաստիկ վախեցայ որ մի գուցէ գերուհիներն ինձ առաջնորդէին դէպի այդ սենեակը. սակայն իմ բարի աստղի օգնութեամբ՝ ես լաւ բարի-յաջող ժամանակ հասայ այնտեղ, որովհետեւ երեք մոլլա բաշին այդ օրը կոռել էր իր կնոջ հետ, և վերջինս պատրաստ չէր ընդունելու նրան (ինձ): Ինձ առաջնորդող գերուհիներն էլ կարծես թէ իմանում էին այդ բանը, որովհետեւ երբ նրանք տեսան որ ես տրամադիր չէի մտնելու լուսաւորուած սենեակը, ինձ առաջնորդեցին դէպի մի դուռ, որ բացուեց մի փոքրագոյն բակի մէջ, ուր կար մի խալվաթ (հանգստանալու սենեակ): Այնտեղ մտայ ես:

Իմ միւս մտատանջութիւնն էր թէ ինչպէս ազատուել այդ երկու գերուհիներից: Առջևիցս անցնելիս՝ նրանք չկարողացան դէմքս տեսնել. բայց եթէ նրանք ինձ հետ մտած լինէին խալվաթը, թերեւ կը ճանաչէին ինձ և... և յետոյ վաճկը գար ինձ: Մէկի ձեռքից ճրագն առի և միւսին գլխովս նշան արի հեռանալ: Եթէ ես նոյն անխոհեմ երիտասարդը լինէի ինչպէս էի Զինարի հետ ծանօթանալու ժամանակ՝ թերեւ ես էլի մի անխոհեմ գործ կը կատարէի, մի գործ՝ որ շուտ կը մատնէր ինձ. բայց այժմ ես երկիւղով՝ մինչև անգամ սոսկումով էի նայում այդ երկու ջահիլ ստրկուհիների վրայ:

Կեանքիս ամենաերջանիկ ըոպէներից մէկն էր այն ըոպէն՝ երբ նրանք շուտ եկան, հեռացան և թողեցին ինձ իմ մտած-մունքներին: Բախտիս փոփոխութիւնը որ տեղի էր ունեցել վերջին մէկ ժամուան մէջ՝ այնքան անսպասելի էր, որ ինձ թուաց թէ քայլում էի երկնքի և երկրի մէջ, և թուաց նաև որ խաբեբայի դերս յաջողութեամբ կատարելուց և անձս փրկելուց յետոյ իմ առաջին իմպուլզը (impulse) կը լինէր՝ փոփոխակի մի ըոպէ հրճուել, ցնծալ և միւս ըոպէն վախենալ, դուզալ, մտածելով որ մի գուցէ բարի բախտս լքանէր ինձ:

Գլ. Ժը.

Արկածի հետեւանքները, որ վտանգ են սպառնում Հաջի Բաբային, վերջանում են ականքեւ բարեբախտութեամբ:

Երբ երկու գերուհիները հեռացան ու ես մնացի մենակ, իսկոյն փակեցի սենեակի դուռը և ճրագը դրի մի անկիւն որպէսզի, եթէ որեւէ մէկը հետաքրքրութիւնից պատուհանի ապակիներէ միջով նայելու լինէր սենեակի մէջ՝ չկարողանար ճանաչել ինձ, չիմանար որ ես մոլլա բաշին չէի:

Այս անելուց յետոյ, խելքիս եկաւ, որ կարելի էր իմ երեակայածից աւելի բան դուրս հանել կամ շահել այս արկածից: «Ես պիտի խուզարկեմ բարի մարդու գրպանները, մտածեցի ես. գուցէ նրանց մէջ կը գտնեմ այնպիսի բաներ, որ կը նպաստեն իմ կազմելիք ծրագրին և ապագայ պատմութեանը»: Ես փնտրեցի նրա գրպանները. աջ կողմի գրպանումը գտայ երկու նամակ, մի թէսքի և նրա կնիքները, իսկ ձախումը մի փոքրիկ հայելի, մի սանր և մի ղալաժղան (գրիչ-թանաքաման): Նրա ժամացոյցը ծոցումն էր, և մի ուրիշ փոքրիկ ծոցի գրպանում որ գտնուում էր թևի տակին, կար մի փոքրիկ քսակ:

Ամենից առաջ ես քննեցի քսակը. նրա մէջ հինգ թուման ոսկի և երկու թուման էլ արծաթ դրամ կար: Ժամացոյցը ոսկէ էր և անգլիական, ղալաժղանը որ գեղեցիկ նկարներ ունէր վրան՝ պարունակում էր իր մէջ թանաքամանը, մի գրչահատ, մի մկրատ և միքանի գրիչներ: Այս բոլորի ինչպէս և շատ ուրիշ մանր-մունր իրերի վրայ՝ ես նայեցի որպէս իմ սեփականութեան, որովհետեւ ես վճռեցի վերջնել բոլորը, բայց կրկին տեղաւորեցի իրանց տեղերում իմ անձի վրայ:

Յետոյ սկսեցի քննել նամակները: Նրանցից մէկը, որ կնքուած չէր, հետեւալ պարունակութեամբ էր.

«Ո՛վ բարեկամ, մտերիմս, հղթայրս»:

—Օհօ, սա մի հաւասար աստիճանի տէր մարդու գրած է, ասացի ես:

«Դու գիտես թէ այս տողերը ձեզ գրող բարեկամը որքան սէր է սնուցանում իր սրտում դարուս պայծառ աստղի և օրհնեալ մարգարէի համար, և նրա միակ իղձն է, որ նրանց մտերմութիւնը օրաուր աճի ու զօրանայ: Նա ուղարկում է վեց հատ Սպահանի ընտիր սեխ, որպիսին ամեն օր չէ ձարւում, և խնդրում է, քանի որ նա գնահատում էր իր մօրուքը.

որ շնորհէք նրան անսահման արտօնութիւն գինի խմելու. որովհետեւ բժիշկները հաւատացնում են նրան, որ եթէ նա առատօրէն գինի չխմի, չէ կարող երկար ապրել մտրակելու և բնաջինջ անելու ճշմարիտ հաւատի թշնամիներին»:

«Սա կարող է դահճապետի գրածը լինել, ասացի ես: Պարսկաստանում էլ հիվ է կարող այսպէս միքանի խօսքով բացատրել իր իսկական բնաւորութիւնը—շողոքորթ, արբշիռ, սնապարծ, խրոխտաբան: Ես մի բան կ'օգտուեմ սրանից, բայց դեռ կարգամ միւսը»:

Բացի միւսը և կարգացի հետեւեալը.

«Ո՛վ իշխան և տէր իմ:

«Այն խոնարհ ստորադասը, որ համարձակուեմ է այս տողերն ուղղել ճշմարիտ հաւատի նեցուկին, անհաւատների սոսկումին և մեղաւորների ապաւինին, թոյլտուութիւն է խնդրում աղաչել, որ հազար դժուարութիւններից յետոյ նրան ի վերջոյ յաջողուել է դիպացիներից հարիւր թուման կանխիկ դրամ ստանալ և յիսուն խալվար կամ իշաբեռ ցորեն. որ այն մարդը՝ Հոսէյն Ալին կամ չուզեց կամ չկարողացաւ որևէ բան տալ, թէպէտ նա նրան երկու անգամ ֆալախկային կապեց, և այդ պատճառով նա գրաւել է նրա երկու եզները, որ նա կը շարունակի իր բոլոր կարողութեամբ ամեն ջանք գործ դնել, և եթէ մէկն ուղարկուի ստանալու այն փողերը, որ արդէն պատրաստ է, նա կը յանձնուի՝ պատշաճ հրամանագիր ստանալուն պէս»:

Նամակը վերջանում էր այն սովորական խօսքերով, որ մի ստորադաս ուղղում է իր իշխանաւորին, և կնքուած էր մի փոքրիկ կնիքով, որի վրայ կարդուում էր գրողի անունը—Արդիւլ Գէրիմ:

«Կուցէ իմ բարի աստղը, մտածեցի ես, դեռ կը պաշտպանի ինձ, և ես կը կարողանամ ստուգել թէ հիվ է այս Արդիւլ Գէրիմը, և ուր է այն գիւղը որտեղից նա գրում է. եթէ այդ ստուգեմ՝ հարիւր թումանն իմ կը լինի»:

Ինչէն, այդ նամակը դեռ թողեցի և սկսեցի մտածել դահճապետի գրածի վրայ. բաւական խորհելուց յետոյ ես գրեցի հետեւեալը որպէս պատասխան:

«Ո՛վ բարեկամ, հոգիս:

«Անմասն բարեկամիդ նամակը ծամանակին ստացուել է, և բովանդակութիւնը հասկացուել: Երբ իսլամի սուրբ գրոշակը կը գրկուի առիւծների առիւծից, երկայարի սրից և ոյժի աշտարակից, մինչդեռ կարելի է փրկել և պահել նրան, հիվ է կարող կասկածել թէ ինչ կը լինի: Խմիր գինին, բարեկամ,

խմիր որքան ուզում ես, և թող ճշմարիտ հաւատի թշնամիները դողան: Յաջողութիւն եմ ցանկանում տանդ ուղղարկածդ: Եթէ համար, բայց մի ուրիշ շնորհ էլ աւելացրու արդէն ինձ միւս շնորհների վրայ, բարեկամիդ մի լաւ թամբած ձի փոխ տուր, որովհետեւ դա հարկաւոր է մի շատ կարևոր գործի համար: Նա առողջ և անմեղաւ կը վերադարձնի դրան, հէնց որ իր բախտի աստղը նրան կ'առաջնորդի դէպի տուն:

Այս նամակը գրելուց յետոյ, ես դրոշմեցի հանգուցեալի Գրիգորի և վճռեցի որ ինքս անձամբ տանէի յանձնելու միւս առաւօտը:

Միւս նամակին ես գրեցի հետևեալ պատասխանը.

«Շատ սիրեցեալ Արդիւլ Բէրիմին:

«Մինք ստացել ենք ձեր նամակը և հասկացել ենք պարունակութիւնը: Սոյն տոմար ձեզ կը յանձնի մեր հաւատարիմ Հաջի Բաբա բէգը, որին դուք կը յանձնէք ինչ փող որ պատրաստի ունէք: Ուրիշ գործի վերաբերմամբ մենք շուտով կը գրենք ձեզ, սակայն մինչ այդ դուք շարունակեցէք ձեր ֆալսիկաները, և մենք կ'աղօթենք, որ Ալլահը պահի ու պաշտպանի ձեզը:

Տոմար վերջացնելով՝ ես սպասեցի յարմար ժամին փախչելու իմ տեղիցը, ուր բոպէական վտանգի մէջ էի. որովհետեւ եթէ իմ ուժ լինելն իմացուէր, վախճանս շատ խայտառակ կը լինէր:

Կէս գիշերից մի քիչ անց էր, և ես պատրաստուում էի գլուխ ծլկուել իմ սենեակից՝ երբ մէկը մեղմօրէն հրեց դուռը, կարծես թէ ուզում էր ներս մտնել, իմ քարսափը կարող է աւելի լաւ երևակայուել քան արտայայտուել: Ես կարծեցի, թէ հրեողը դարուղան էր որ իր ֆէրրաշների հետ ուզում էր ներս մտնել և բռնել ինձ: Տագնապով սպասում էի հետևանքին, երբ ջանքի մի կանացի ձայն շշնջալիս խօսքեր, որոնց նշանակութիւնը վախիս և յուզմունքիս պատճառով չկարողացայ հասկանալ: Ինչ էլ որ լինէր նրա այցելութեան նպատակը, ես միայն մէկ պատասխան ունէի տալու, այն է՝ մի բարձր ու ծանր խռոց, որ բաւական էր յայտնելու թէ՛ սենեակում քնած մարդը ամենակին չէր ցանկանում, որ իր քունը խանգարուէր:

Քիչ սպասելուց յետոյ ինձ թուաց որ ամեն բան կրկին լռեց ամբողջ շինութեան մէջ. ուստի ես՝ զգուշութեամբ դուրս եկայ սենեակիցս և անձայն գնացի գլխաւոր դրան մօտ, որը հեշտութեամբ բաց արի և փախայ հալածուածի պէս: Ես սպասում էի ամենայաջող պատահութեանը, որ կարողանայի փախ-

չել փողոցներովը առանց հանդիպելու ոստիկաններին և առանց ճանաչուելու գիշերապահներին:

Վերջապէս արեւ ծագում էր, և բաղարների խանութները սկսեցին կամաց-կամաց բացուել: Մոլլա բաշու շորերը հագին լինելով իմ առաջին հոգն եղաւ մի քիչ փոփոխութեան ենթարկել նրանց, այնպէս որ ինձ տեսնողը չկասկածէր ինձ: Ես իսկոյն գնացի մի հին-հանդերձավաճառի խանութ, ուր մի թեթեւ ծախքով փոփոխութիւն մտցրի շորերիս մէջ, թէպէտ մի-կնոյն ժամանակ՝ ես զգուշացայ ձեռքից չտալ որեւէ մէկը այն արժէքաւոր իրերի որ մոլլա բաշու գրպաններում էին, և որ ես իւրացրել էի:

Այս անելուց յետոյ ես գնացի դահճապետի տունը, ուր նամակը յանձնեցի նրա ծառաներից մէկին, որը բոլորովին անծանօթ էր ինձ, և ասացի որ մոլլա բաշին խնդրում էր որ նամակի պատասխանն անմիջապէս տրուէր որովհետեւ մի կարեւոր գործի համար՝ նա ստիպուած էր առանց ժամանակ կորցնելու դուրս գնալ քաղաքից: Շատ ուրախացայ ես, երբ ծառան նամակը դահճապետին յանձնելուց յետոյ, ինձ յայտնեց որ իր աղան անդէրունում լինելով՝ չէր կարող անմիջապէս գրաւոր պատասխան տալ և որ սակայն նա հրամայել էր որ իր ձեռքից մէկը իսկոյն յանձնուէր ինձ:

Օ՛, ինչպէս նայեցի կենդանուն երբ նա դուրս էր բերւում ախոռից՝ զարդարուած ոսկեգունտ և թաւշապատ թամբով, ոսկէ շղթայից շինուած վզնոցով և ոսկեղարդ սանձով: Ես մի տեսակ սարսափ զգացի երբ մտքովս անցաւ որ այդ բոլորը իմ սեփականութիւնը պիտի դառնար՝ բայց երկար չպիտի մնար ինձ համար: Այնքան սաստիկ էր երկիւղս ու կասկածս որ ես մի րոպէ մտածեցի խնդրել ծառայից որ փոխէր ձիու թամբն ու միւս զարդերը և աւելի դիմացկունն ու աստիճանադէմը դնէր վրան, բայց կրկին մտածելով որ ուշանալը կարող էր վտանգաւոր լինել՝ ուստի առանց խօսք ասելու հեծայ ձին և շատ կարճ ժամանակում արդէն բաւական հեռացել էի քաղաքից:

Ես քեցի առանց յետ նայելու կամ կանգ առնելու՝ մինչեւ հասայ Քարաշ գետի մօտի խորտուբորտ տեղերը, ուր իջայ մի քիչ հանգստանալու: Մի անգամ ես լսել էի որ մոլլա բաշու գիւղը ընկած է Համադանի ճանապարհի վրայ, ես այդ յիշեցի և ձիս հեծնելով՝ քեցի դէպի այդ կողմը: Բայց ճիշտը խոստովանուած՝ երբ ես կանգ էի առնում շունչ քաշելու և մտածում էի բախտիս արտաքոյ կարգի փոփոխութեան վրայ՝ սկսում էի

աստիկ վախենալու ինչպէս մի գահավէժ ժայռի պոռնկին կանգնած մարդուն մի տեսակ մղանք (impuls) դրդում է վայր գլորելու իրան, այնպէս էլ ինձ մի տեսակ մղանք կարծես թէ դրդում էր յետ դառնալ և ինձ գցել դատաւորի ձեռքը, սակայն ես շատ դժուարութեամբ յաղթեցի դրան:

Երողից ոչնչով աւելի կամ պակաս չեմ, մտածեցի ես, և եթէ բռնուեմ՝ ինձ հրասանդով (mortar) կը սպանեն: Բայց ախր թիվ պատճառ դարձաւ որ ես այսպէս եղայ. անշուշտ, եթէ թաղղիւրը (ճակատագիր) այսպիսի դարձանալի հետևանքներ է առաջ բերում, ուրեմն ես ոչինչ յանցանք չունիմ: Ես ամենեւին չցանկացայ որ մոլլա բաշին մեռնէր, բայց եթէ նա ինքը ցանկացաւ իմ զոգումն աւանդել իր հոգին, և եթէ ուղեկցած չուզենամ ես պիտի պատասխանատու ճանաչուեմ նրա մահուան համար՝ ուրեմն պարզ է որ ճակատագիրն ինձ իր վէճիւն է նշանակել, և ինչ էլ որ ես անեմ իբրև մոլլա բաշի՝ ապօրինի չի լինի. ուրեմն նրա շորերն իմս են, նրա հարիւր թումանն իմս կը լինի, և ինչ էլ որ ես գրեմ եմ նրա անունով՝ ապօրինի չէ»:

Քաջալերուելով այս եզրակացութիւններով՝ կրկին ձիւ հեծայ և քշեցի դէպի ամենամօտ գիւղը, այնտեղից իմանալու մոլլա բաշու գիւղի տեղը և հետաքրքրուելու թէ Արդիւլ Քէրիմ անունով մարդ ճանաչուե՞լ էր այդ կողմերում: Կարծես թէ զարեբը (dice) վճռել էին միշտ ինձ յաջող ընկնել, որովհետեւ ես շուտով իմացայ որ մէկ ֆարսաղ հեռու գտնուող միւս գիւղը հէնց մոլլա բաշուն էր, և Արդիւլ Քէրիմ անունով մի մոլլա էլ այնտեղի վերակացուն և եկամուտ հաւաքողն էր: «Օհօ, ասացի ես, նա մոլլան է. ուրեմն ես պիտի փոխեմ նամակի ոճը և զետեղեմ նրա պատուանդանները»:

Ես իսկոյն նստայ, ղալամդանը հանեցի գրպանիցս, և գօտուս միջի թղթի փաթոյթից մի կտոր կտրելով՝ մի ուրիշ նամակ գրեցի և վերջացնելով՝ ճանապարհուեցի դէպի գիւղը, վճռելով, «եթէ հարիւր թումանը ձեռքս ընկնի, իսկոյն ամենակարճ ճանապարհով կը գնամ դէպի պարսկական ամենամօտ սահմանագլուխը»:

ԳԼ. ԾԹ.

Հաջի Բարան չէ փայլում հաւատարմութեամբ։—Մովսէս Նադանի կեանքն ու արկածները։

Հասնելով Սէյդաբադ (այդ էր մովսէս բաշու գիւղի անունը), ես ինձ հեղինակաւոր մարդու ձև ու կերպարանք տուի որպէսզի անձնաւորութիւնս համապատասխան երևար գեղեցիկ ձիուս և նրա զարդարանքներին, և մտայ գիւղը այնպիսի խախտանական հայեացքով՝ որ ինձ հանդիպող գիւղացիները խառնարհութեամբ գլուխ իջեցրին ինձ։

—Ո՛ւր է Արդիւլ Գէրիմը, հարցրի ես՝ իջնելով և ձիւս տալով նրանցից մէկին։

Մի բռնեւոր ամեն մարդ շարժման մէջ ընկաւ նրան որոնելու համար, և նա շուտով երևաց։ Մովսէսական ձևով նրան ողջունելուց յետոյ՝ ասացի.

—Ես եկել եմ ի դիմաց մովսէս բաշու, այնպիսի մի գործի համար՝ որ շատ լաւ յայտնի է ձեզ,—և իսկոյն յանձնեցի տոմար։

Արդիւլ Գէրիմը սուր, Թափանցող աչքեր ունէր. դա ինձ համար լաւ չէր, մանաւանդ որ նա սկսեց իր աչքի անկիւնով նայել ինձ. բայց ես հանգստացայ երբ տոմար կարդալուց յետոյ նա ասաց.

—Բէ՛ չաշմամ՝ (աչքիս վրայ), փողը պատրաստ է, բայց դուք պիտի քիչ հանգստանաք։ Բիսմիլլահ ներս եկէք։

Ես ձևացրի որպէս թէ շատ շտապում էի վերադառնալ։ Որովհետև ամենևին ցանկութիւն չունէի երկար ժամանակ մընալ նրա սուր աչքերի կրակի տակ. բայց կասկածներ չյարուցանելու համար՝ համաձայնեցի մի քիչ մրդեղէն և մածուն ուտել։

—Ես չեմ յիշում որ ձեզ տեսած լինեմ մովսէս բաշու տընում, ասաց նա երբ ես լայն բացել էի բերանս կուլ տալու մի մեծ կտոր սեխ—ես չեմ յիշում՝ ձեզ, չնայած որ ես շատ լաւ ծանօթ եմ նրա բոլոր ծառաների հետ։

—Ո՛չ, ասացի ես կէս-խեղդուելով, ես նրա ծառաներից չեմ, այլ դահճապետի՝ որի հետ մովսէս բաշին, ես կարծում եմ, փողի հաշիւ ունի։

Ինձ թուաց թէ նա կասկածեց և զարմացաւ թէ ով էի որ այդպէս լաւ հագնուած էի և այդպէս գեղեցիկ ձի ունէի, բայց երբ նա լսեց որ ես դահճապետի մարդիկներից էի, նրա կասկածը փարատուեց։

Ստանալով հարիւր թումանը, ես ապահովացրի ծոցումս, և ապա ձեռքներով որպէս թէ շտապով վերադառնում էի քաղաքը, մնաս բարով ասացի և հեռացայ դիւղից աւելի թեթեւ սրտով քան գնացել էի. բայց հէնց որ բաւական հեռացայ, ձիուս գլուխը դէպի հակառակ կողմը դարձրի և բոլոր ուժովս քշեցի, առանց կանգ առնելու՝ մինչև ձին ծածկուեց փրփուրով: Ես վճռեցի ուղիղ գնալ դէպի Բիրմանշահ, այնտեղ ծախել ձին, թամբը, սանձը, և ապա գնալ Բաղդադ, որտեղ ես կարող էի ազատուել վտանգից:

Հինգ ֆարսաղ ճանապարհ կտրելուց յետոյ ես տեսայ մէկը որ բաւական արագ քայլերով գնում էր ինձանից բաւական առաջ և երգում էր իր բոլոր ուժով: Նա շատ աղքատիկ կերպով էր հագնուած. նրա գլուխը ծածկուած էր արագչինով, երեսի վրայ կախած էր մի կտոր կտաւ, ոտնամանները՝ հին տրեխներ, և ոչ մի բան չուէր վրան՝ որ ցոյց տար թէ նա ճանապարհորդ էր: Աւելի մօտենալով՝ ինձ թուաց թէ մի ժամանակ ես տեսել էի նրան: Նա մի բարձրահասակ և վայելչակազմ մարդ էր՝ կուճքը լայն, մէջքը նեղ:

Եթէ նա երգելիս չլինէր, ես կը համոզուէի որ նա մուլա Նադանն էր, որովհետեւ խելքիս չէր գալիս, դժուարանում էի հաւատալ որ նրա պէս լուրջ բնավորութիւն ու ծանր վարք ունեցող մի մարդ կարող էր երբեքից ստորացնել իրան այդպիսի անվայել, անազնիւ բան անելով—երգելով. բայց վերջապէս, ինչ ասել կ'ուզի որ քիչ-քիչ մօտենալով նրան և լաւ ուշադրութեամբ զննելով նրան՝ տեսայ որ հէնց ինքն էր—մուլա Նադանն էր:

Ես կանգնացրի ձիուս, մտածելու թէ՛ խօսելի նրա հետ և թողնելի՛ որ նա ինձ ճանաչէր, թէ՛ չէ: Թողնել, անցնել նրան՝ մեծ անիրաւութիւն կը լինէր, իսկ թողնել որ նա ճանաչէր ինձ՝ ես այն ժամանակ կը ծանրաբեռնուէի մի անյարմար ընկերով: Բայց մի ուրիշ բան էլ մտածեցի. եթէ նա իմ ուղիւս հասկանար և իմանար որ ես արհամարհելով իրան՝ թողել, անցել էի, նա հաւանակաբար առաջին պատեհութեամբ ինձ աւագակ կը հրատարակէր. բացի դրանից, խիստ կը թշնամանար հետս, և ես միշտ երկիւղի մէջ կը լինէի:

Երկուսս էլ մօտենում էինք մի դիւղի, ուր պիտի գիշերէինք: Ես արդէն վճռել էի շարունակել ճանապարհս. ինձ համար այնտեղից այլևս վերադառնալ չկար. ուստի հարկաւոր էր որ այդ գիւղում մի քիչ հանգստանայի, ձիուս էլ լաւ կերակրէի, թարմացնէի՝ որպէսզի կարողանար կատարել իմ մտածած երկար ճանապարհորդութիւնը:

Եւ այսպէս վերջաւորեցի մտքուսս.—«Եթէ նա ճանաչի ինձ, ես կը խօսեմ հետը, եթէ չճանաչի՝ կ'անցնեմ առանց ուշադրութիւն դարձնելու նրա վրայ»։ Եւ քնեցի ձիւ և հասայ նրան. նա յետ նայեց և ինձ գննեց ոտից մինչև գլուխ. բայց ինչպէս երևաց՝ չկարողացաւ ճանաչել ինձ։

—Ո՛վ աղա, ողորմեցէք ինձպէս մի տարաբախտ մարդու, որը աշխարհուս, բացի Ալլահից՝ վերևում, և ձեզանից՝ վարում, ուրիշ ոչինչ չունի։

Նրա այս աղերսանքը շարժեց սիրտս. բայց մի քիչ ժամանակ լուռ մնացի տեսնելու թէ նա էլ ինչ կ'ասէր։ Վերջն սկսեցի քահ-քահ ծիծաղել. իմ ծիծաղելն էլ կարծես նոյնքան տարածամ էր, ինչքան նրա երգելը, որովհետև նա բոլորովին շփոթուեց ու զարմացաւ վրաս. բայց երբ սկսեցի խօսել նրա հետ, նա ճանաչեց ինձ և խենթութեան աստիճանին հասած հրճուանքով ու յափշտակութեամբ վազեց ինձ մօտ։

—Ա՛խ, Հիմշի, քնուիս, աչքիս լոյսը, գոչեց նա և համբուրեց ծունկս։ Արդեօք դու ո՞ր երկնքից ընկար այստեղ. որտեղից է այդ սիրուն ձին, այդ զարդարանքները։ Զինքն թէ ջին-նիրի, դեերի հետ ես գործ ունեցել, կամ չլինի՞ թէ բախտը սիրիւ և որդեգրել է քեզ որպէս իր ժառանգը։

Նրա այս խօսքերը այնքան դուարճացրին ինձ, որ ես սկսեցի կրկին քահ-քահ ծիծաղել։

—Այդ ի՞նչպէս եղաւ, շարունակեց նա, որ դու կարողացար այդպէս շուտով ջորիդ փոխել այդ սիրուն, զարդարուած ձիու հետ։ Բայց ի՞նչ լուր իմ ստացուածքի մասին, դու գոնէ չազատեցի՞ր էշիս. ա՛խ, դու չգիտես թէ ես ինչքան եմ յոգնել, այլ ևս չեմ կարողանում քայլել։ Ասո՛ւ, Հիմշի, պատմի՛ր ինձ ամեն բան, ի սէր Մարգարէի մօրուքի, ասո՛ւ, ասո՛ւ։

«Եթէ, մտածեցի ես, իմ արկածները միառմի չպատմեմ նրան, նա կը սկսի կասկածել ինձ, և խելքին կը գայ որ իբր թէ ես տիրապետել եմ նրա գոյքը, ծախել եմ և գնել եմ սիրուն ձիւ ու նրա զարդարանքները»։ Ուստի խոստացայ նրան հաւատարմութեամբ պատմել ամեն բան, բայց միևնոյն ժամանակ խնդրեցի նրանից դիւրահաւատութեան մի մեծ պաշար պատրաստել, որովհետև իմ պատմելիքս նրան այնքան զարմանալի, այնքան հրաշալի պիտի թուային, որ նա հաւանականաբար պիտի կարծէր թէ ես կատակ, խալ էի անում հետը։

Մենք հասանք գիւղը, ուր իջանք մի մէհմանխանէում՝ (պանդուկում) որից Պարսկաստանի ամեն մի գիւղում գտնւում է։ Իմ կերպարանքի տէր մարդը չէր կարող երկար աննկատելի մնալ։ Գիւղի քեանդխողան իսկոյն եկաւ և մեզ համար մի լաւ

ընթրիք պատրաստել տուեց: Մինչդեռ ընթրիքը պատրաստուում էր, ես ընկերիս պատմեցի իմ արկածները:

Նադանն ուշադրութեամբ ականջ դրեց ինձ և մօտ էր ծիծաղից մեռնէր երբ լսեց որ իր վաղեմի թշնամի մոլլան բաշու հաշուով էի ես հանդիպել իմ երկայ յաջողութեանը: Մինչ մենք նստած մտերմաբար խօսուում էինք (որովհետեւ թըշուառներն իրանց դարդերը միմեանց պատմելով բաւական թեթեւանում են), ես տեսայ որ մինչև այդ ժամանակ դեռ լաւ չէի ուսումնասիրել նրա իսկական բնաւորութիւնը:

— Ինձ թւում է, ասացի Նադանին, որ երբ ես քո ծառայութեան մէջ էի, դու միշտ մի տեսակ կեղծ կարեւորութիւն էիր տալիս քո անձնաւորութեանը, որովհետեւ, ես զարմանում եմ թէ մի մարդ որ իսկապէս հպարտ բնաւորութիւն ունի՝ ինչպէս է կարող այնքան քաղցր և սիրելի դառնալ, ինչպէս դարձել ես դու:

— Ա՛խ, Հանջի, հառաչեց նա, դժբախտութիւնը մեծ փոփոխիչ է: Իմ կեանքը նմանեցրել եմ այն անուախաղին (whirligig) որ նօ բուզի տօնին խեղկատակները խաղում են հրապարակներում, և՛ որի մէջ միշտ մէկը ճօճւում է երկնքի և երկրի մէջ: Դժբախտաբար ես այն մարդերից մէկն եմ, որոնք չեն ընդունում այն առածը, թէ «գորգը խոնաւ տեղ մի փոխիր»:

— Պատմիր ինձ բոլոր արկածներդ, ասացի ես. դրանով մենք ժամանակ կ'անցկացնենք, և ես յոյս ունիմ որ այժմ դու այնքան լաւ ճանաչում ես ինձ՝ որ մտերմաբար կը պատմես ամեն բան, ոչինչ չես թաքցնիլ ինձանից:

— Իմ պատմութեան մէջ դու ոչինչ չես լսելու որ սովորական չէ պարսիկների կեանքում, որոնք այսօր իշխաններ են՝ վաղը մուրացկաններ. բայց որովհետեւ շատ հետաքրքիր ես լըսելու, ես կը պատմեմ: Եւ նա սկսեց այսպէս.

«Ես համադանցի եմ: Հայրս այնքան մի կարող և մեծանուն մոլլա էր՝ որ ձգտում էր Պարսկաստանի մուշտահիդ դառնալ. սակայն նրա հակաճառութիւնները մեր՝ կրօնի միջանի կէտերի վրայ՝ դժբախտաբար այնքան հեռու տարան նրան, որ նա չհասաւ իր փափագին, իր ցանկացած բարձրութեանը: Նա սաստիկ ատում էր օսմանցիներին և բոլոր սոննիներին ընդհանրապէս: Ասում է որ մեր նախահայրերից մէկն էր, որ ամենից առաջ Պարսկաստանում մտցրեց աւելի զօրեղ ատելութեան ոգին նրանց դէմ, քան եղել էր իրանից առաջները: Ահա երեխաների դաստիարակութեան գործի մէջ նա մտցրեց մի պարզ նորաձեւութիւն, որով այնպէս գաղափարներ էին մշտնջնում փոքրիկ երեխաների գլխների մէջ, որ նրանք հէնց

մանկութիւնից սկսում էին թշնամանալ Օմարի ցեղի հետ: Դու ինքդ էլ անշուշտ յիշում ես որ դպրոցներում փոքրիկ երեխաներին սովորեցնում են անիծել Օմարին: Սինչև անգամ երբ մի աշակերտ ուղում է իրաւունք խնդրել իր ուսուցչից տուն գնալու համար, նա պարտաւոր է խնդրել այս բառերով. «Լա՛ն-նաթ ըար Օմար» (անէծք Օմարին): Ես վստահ եմ որ ինքդ էլ միշտ կցել ես Օմարի անունը ամեն բանի հետ՝ որ պիղծ ու անմաքուր է, և գիտեմ որ գոնէ օրեկան մէկ անգամ կրկնում ես այն անէծքը որ քեզ սովորեցրել են դպրոցում:

—Այո, այո, այդպէս է, ասացի ես, և նա շարունակեց.

«Հայրս դառնապէս ատում էր ոչ միայն Օմարի հետևողներին, այլ նաև բոլոր անհաւատներին: Նա անիծում էր հրէաներին, քրիստոնեաներին, կրակապաշտներին և կռապաշտներին. փառասիրութիւնը՝ որից նա դրդուած շատ բաներ էր անում, վերջը մի իշխող սկզբունք դարձաւ նրա համար: Նրա ընտանիքը, իհարկէ և՛ ես, դաստիարակուեց նրա վարդապետութիւններով, և այնպէս ծծեց, սովորեց նրա նախապաշար-ժողովները, որ մենք պինդ կապով կապուեցինք միմեանց հետ, և կ'ասես թէ մի առանձին աղանդի հետևող դարձանք—դարձանք անհաւատների սոսկումը և շիա հաւատի ամենաշեմ պաշտպանը:

«Այս բոլորը լսելուց յետոյ դու չախտի դարմանաս թէ ես ինչու ջարդել տուի թէհրանի հայերի գինու կարասները. սակայն միայն այդ դէպքում չէր որ իմ եռանդն ու նախանձախնդրութիւնը նեղութեան մէջ գցեց ինձ. իմ պատանութեան օրերում էլ երբ դեռ դպրոցի աշակերտ էի Համադանում, մի սարսափելի խռովութեան գլխաւոր պատճառը դարձայ: Ասեմ թէ ինչպէս.

«Բաղդատի փաշայի կողմից ուղարկուած մի էլէի (դեսպան) իր հետևորդներով դնում էր թէհրան: Նա անցնում էր մեր քաղաքի վրայով, ուր երկու-երեք օր մնաց: Հօրս՝ ինձ աւանդած դասերը գործադրելու բուն ցանկութեամբ բորբոքուած՝ ես հաւաքեցի մի խումբ ինձպէս մոլեռանդ տղերք, որոնց մի յուզիչ ճառով գրգռեցի, և մենք բոլորս վճռեցինք մի սխրագործութիւն անել՝ վայել և արժանի մեր սկզբունքներին: Մենք որոշեցինք յարձակուել մեր տաճիկ հիւրերի վրայ, ցոյց տալ նրանց թէ մենք ինչ դառն ատելութեամբ էինք անիծում Օմարին, և հրաւիրել նրանց յարել Ալլիի վարդապետութեանը:

«Մուէյման էֆէնդին (այդ էր դեսպանի անունը) շիաների ռխերիմ թշնամին էր և իրան սոհնի էր հրատարակում: Մի օր երբ նա գուրս էր գալիս իր բնակարանից այցելելու

Համադանի քաղաքապետին, մենք խուժը կազմեցինք և նրան շրջապատելով գողացինք. «Անէ՛ծը Օմարին», Այս վիրաւորանքին նրա ծառաները կատաղաբար պատասխանեցին բռունցքներով, մենք էլ սկսեցինք կարկտի պէս քարեր թափել նւրանց գլխներին, և կռիւն ու աղմուկը ընդհանուր դարձաւ: Մենք վայր զցեցինք փաշայի ներկայացուցչի չալման, թքով լուացինք նրա մօրուքը և պատառ-պատառ արինք նրա շորերը:

«Իհարկէ այսպիսի լրբութիւնը չէր կարող անպատիժ անցնել: Էլ չին կատաղած՝ սպառնաց սուրհանդակներ ուղարկել Շահի մօտ և մինչև անգամ պատրաստուեց վերադառնալ Բաղդադ, իր փաշայի մօտ. բայց քաղաքապետը վախենալով նրա բարկութիւնից՝ խոստացաւ կատարեալ բաւականութիւն տալ նրան, իսկոյն նրա ձեռքը յանձնելով խռովարարների պարագլուխներին:

«Վստահելով Համադանում հօրս ունեցած ազդեցութեան վրայ և պարծենալով նրա սխրագործութիւններով, ես սկզբում նշանակութիւն չտուի այն վրէժխնդրութեանը՝ որ օսմանցիները սպառնացին հանել մեզանից. սակայն քաղաքապետը վախենալով պաշտօնանկ լինելուց, և նրա հոգը չլինելով թէ Ալին մարգարէի ճշմարիտ յաջորդն է, կամ Օմարը և Աբուբէքրը բռնակալնէր են եղել թէ չէ՝ իսկոյն հրամայեց իր ֆէրրաշներին բռնել ինձ և ընկերներիցս երկուսին: Նրա հրամանը կատարուեց, և մենք դրուեցինք տաճիկների տրամադրութեան տակ:

«Եւ չեմ կարող մոռանալ մտքիս այն սաստիկ յոյզերը, որ զգացի երբ ինձ կանգնեցրին իմ առեւտրութեան առարկաների առաջ: Ես ամենակին չէի սիրում այն խիստ ծեծը, որ նրանք մտածուլ էին տալ մեզ: Նրանք այնքան էլ բարեսիրտ չէին որ ներէին մեզ. վրէժխնդրութեամբ բորբոքուած՝ նրանք հրամայեցին Ֆալախկայի վարչութեանը պատժել մեզ: Մեր ոտները կապուեցին այդ գործիքին, և, զորս դու պատուիրեցեր, մենք կերանք, մինչև մեր ոտները խմոր դարձան: Հարուածների տակ մենք մխիթարում, բաւականութիւն էինք տալիս մեզ՝ մոլեգնաբար հայոյելով մեր թշնամիներին: Ինչևէ, էլ չին բաւականացաւ, և մենք ազատուեցինք:

«Այս արկածը միքանի տարիներ սառեցրեց իմ կրօնական խանդն ու եռանդը, թէպէտ և հօրս պէս՝ համբաւ շահելու տենչով՝ ես հոգով ու մարմնով նուիրուեցի վիճաբանութիւններին: Երբ մօտաւորապէս քսաննհինգ տարեկան էի, և մօրուքս պատուաբեր չափի էր հասել, գնացի Սպահան, որպէսզի այնտեղի մեր երեւելի վարդապետների հետ ընկերութիւն պահելով՝ աւելի ևս յառաջադիմէի և նրանց վիճաբանութիւններին մասնակցելով՝ ցոյց տայի իմ ընդունակութիւնները:

«Ճանկութիւններս իրագործուեցին. ես բաւական անուն վաստակեցի, բայց ինձ հարկաւոր էր մի առիթ՝ որով կարողանայի ականաւոր դառնալ, և այդ առիթը շուտով ներկայացաւ հետեւեալ հանգամանքների շնորհիւ:

«Մեր մեծահռչակ՝ բայց կէս հերետիկոս Շահ Սէֆիի օրով ֆռանդները միջանի առևտրական տներ էին հաստատել Սպահանում: Շահը քաջալերում և պաշտպանում էր նրանց: Նա կատարեալ կրօնական ազատութիւն էր շնորհել նրանց և թոյլ էր տուել հկեղեցիներ կառուցանել իրանց համար, արտասահմանից քահանաներ բերել և մինչև անգամ յանպատուութիւն մեր ճշմարիտ հաւատի իրաւունք շնորհեց նրանց զանգակատներ շինելու և զանգերով իրանց ժողովրդին աղօթքի հրաւիրելու:

«Այդ ֆռանդները իրանց հկեղեցու գլխին «պապ» են կոչում, նա մի տեսակ խալիֆ է և նրա պարտականութիւնների մէկն է, մեր օրհնեալ մարգարէի պէս, տարածել իր կրօնը ամբողջ երկրագնդի վրայ: Զանազան պատուիրակներով այդ պապը մենաստաններ կառուցեց միջանիսը Սպահանում, միջանիսն էլ Զուղայում՝ հայերի գաղութում: Այդ մենաստաններից շատերը այժմ քանդուած, բարձի թողի են արուած, բայց մէկը՝ որի նպատակն էր մասնաւորապէս տարածել քրիստոնէական հաւատը, դեռ գոյութիւն ունի: Ես և մի խումբ նախանձախնդիր ժողովաներ վճռեցինք կործանել այդ մէկն էլ, թէպէտ մեզ արգելք էր հանդիսանում կառավարութիւնը, որ միշտ քաջալերում էր քրիստոնեաներին հաստատուել Պարսկաստանում, որովհետև նրանք իրանց վաճառականութեամբ մեծ հարստութիւն էին մտցնում մեր հրկիրը:

«Այդ մենաստանում ապրում էին երկու դէրվիշներ (վարդապետներ) որոնց մէկը իր էութեամբ փորձանք էր—մէկը՝ որ լաւ ուսումնասիրել էր աշխարհը, շատ խորամանկ էր և այնքան ուշիմ և հանճարամիտ էր՝ որ սատանան չէր կարող նրա հայրը դառնալ: Նա բարձրահասակ, նիհար և ուժեղ մարդ էր: Նրա աչքերը շիկացած ածուխի և ձայնը թունդ բաժու էր նրմանում: Երբ առիթ էր ներկայանում, նա ամենայն վստահութեամբ կրօնական վիճաբանութեան մէջ էր մտնում մեր ամենահմուտ կրօնաւորների հետ և առիւծի քաջութեամբ պնդում էր որ մեր «սուրբ մարգարէն», «ստեղծուած էակների գլխաւորը», «կնքուած միջնորդը», Մոհամէդ Մոստափան (որի վրայ յաւիտենական օրհնութիւն լինի) խաբեբայ էր: Այդ մարդը նաւորդում էր վիճաբանութեան ծովում. կ'ասես թէ նրա նաւի ղեկավարը Նոյն ինքն էր: Խօսքերով չբաւականանալով՝ նա

մի գիրք հրատարակեց, որով իբր թէ փաստերով ապացուցանում էր իր անիմաստ ասացուածի ճշմարտութիւնը: Մեր մուշտահիգններից մէկը մի դժբախտ փորձ արեց պատասխանելու նրա գրքին. բայց նա չմտածեց որ, կրակի հետ խաղ անելը յիմարութիւն է, չմտածեց որ կրակի հետ խաղ անելիս առատ ջուր է հարկաւոր նրան հանգցնելու համար: Մեր մուշտահիգի գրած հերքման մէջ ամեն բան կար, բացի այն՝ որ պիտի լինէր, և դրանով նա աւելի ծաղրի ու անպատուութեան ենթարկեց՝ քան պաշտպանից իսլամութեան փառքն ու կատարելութիւնը:

«Երբ Սպահան հասայ, մարդկանց մէջ խօսակցութեան միակ նիւթը այդ գրքերն էին: Յանկանալով որ ես էլ մի բան անելով աչքի ընկնեմ ես առաջարկեցի որ Ֆոանգ դէրվիշը մի որոշ օր և մի որոշ ժամանակ հրաւիրուէր քաղաքի մադրասէ ջէդիդը վիճաբանելու մուլաների հետ երկու կրօնի ամենմի վիճաբանելի կէտի վրայ: «Կամ մենք նրան կը համոզենք և մուսուլման կը դարձնենք, ասացի ես, կամ նա մեզ կը համոզի, և մենք քրիստոնեայ կը դառնանք, եթէ նա կարողանայ յաղթել մեզ»: Առաջարկութիւնս ընդունուեց, և Ֆոանգ դէրվիշին իմաց տրուեց: Նա իսկոյն համաձայնեց, բայց մենք մեր մէջ նախապէս վճռեցինք որ օլէյմաների կողմը ծակող այդպիսի մի փուշ չպիտի գոյութիւն ունենար Պարսկաստանում, և մեր հաւատի ճշմարտութիւնը չպիտի պաշտպանուէր միմիայն խօսքերով ու ձայներով, այլ իսլամների եռանդով ու թուով: Ըստ կարգադրութեան, բոլոր չալմաւորները, մօրուքաւորները ծածկաբար հրաւիրուեցին ներկայ լինելու մադրասէում նշանակած օրը: Հասաւ այդ օրը, և այդպիսի մի մեծ բազմութիւն դեռ երբէք չէր հաւաքուել. իսլամի որդիքը դեռ երբէք այնպէս զօրեղ կերպով չէին ցոյց տուել իրանց անդիմադրելի ոյժը, ինչպէս արին այդ յիշատակելի օրը:

«Մադրասէում էլ տեղ չկար: Բացի մուլաներից՝ հաւաքուել էր մեր ճշմարիտ հաւատի յաղթութիւնը տեսնել փառագող մեծ բազմութիւն, որ տեղաւորուել էր գաւթումը: Էլ ճար ու ճամբայ չկար. պատերի տակերը, բոլոր անկիւնները լիքն էին: Եկաւ Ֆոանգ դէրվիշը, մենակ, անօգնական, անպաշտպան և կանգնեց մեր նուջև: Նա մի հայեացք գցեց իր շուրջը և սոսկաց երբ իրան շրջապապուած գտաւ այդքան մեծ բազմութեամբ: Նշանաւոր մուլաներից երկու-երեքը, որոնք պիտի վիճաբանէին նրա հետ, նստել էին բոլորի առաջը, և ես էլ կանգնած էին նրանց մօտ: Մենք նախապէս հարցեր էինք պատրաստել նրան տալու և որոշել էինք վարուել նրա տալիք

պատասխաների համեմատ: Բացի իր լեզուից նա ոչ մի ուրիշ լեզուն էր ինքնապաշտպանութեան համար: Նա նստեց մեր դիմաց և ըստերևոյթին շատ վախենում էր այն թշնամութիւնից որի արտայայտութիւնը նա տեսնում էր բոլորի երեսներէ վրայ:

«Առանց մտածելու ժամանակ տալու նրան՝ մենք սկսեցինք:

— Դու հաւատով ես, հարցրեց մոլլաներից մէկը, որ երկընքի Ալլահը մարդկային կերպարանք ստացաւ:

— Ընդունով ես, հարցրեց մի ուրիշը, որ Ալլահը բաղկացած է երեք անձերից և այնուամենայնիւ մէկ է:

— Դու հաւատով ես, հարցրեց մի երրորդը, որ այն՝ որին դուք սուրբ հոգի էք կոչում, աղանակերպ իջաւ երկնքից:

Այս հարցերը մենք այնպէս միմեանց ետևից տուինք նըրան, որ նա շշկուեց, չիմացաւ ինչ անել, որին պատասխանել, ոչ կողմը դառնալ, այնպէս որ նա ստիպուեց իր ամբողջ ուժով դռաւ:

— Մուսուլմաններ, եթէ դուք դիտաւորութիւն ունէք ինձ սպանելու, սպանեցէք, բայց իմացէ՛ք որ ինձ սպանելով՝ դուք ձեր վիճաբանութիւնն առաջ տարած չէք լինի: Դուք միայն պիտի վիճաբանէք հետս. թուով ու բռնութեամբ վրաս յարձակուելը կ'ապացուցանի որ դուք վիճաբանութեանը դիմադրում էք կրքով, և ցոյց կը տաք աշխարհին, որ դուք յաղթուել էք ինձանից:

«Տեսնելով որ հաւանականաբար մեր բանը վատ կը դնար, և նկատելով որ նրա խօսքերը կարող էին իրան նպաստող արդիւնք ունենալով՝ ես առաջինն եղայ որ բարձրաձայն ասացի բազմութեանը.

— Է՛յ մուսուլմաններ, մուսուլմաններ, օգնութեան հասէք. այս մարդը ոտնակոխ է անում մեր կրօնը, այս անօրէնը աշխատում է ոչնչացնել մեր հաւատը, մոլորեցնել մեզ: Օգնութիւն, վրէժխնդրութիւն, մուսուլմաններ:

«Այս խօսքերի վրայ հազարաւոր մարդիկ անմիջապէս իրանց ձայները բարձրացրին նրա դէմ: «Բռնեցէ՛ք դրան», դուաց մէկը, «սպանեցէ՛ք այդ անհաւատին», որոտացին միւսները: Բազմութիւնը շարժուեց ալիքների պէս, և դէրվիշը վտանգի մէջ գտնելով իրան՝ փորձ արեց փախչելու: Մեր մոլլաներից մէկը խղճալով նրան, վաղեց նրան օգնելու. նա իսկոյն իր վերարկուն գցեց անօրէնի ուսերին և դեռ սպանող ձեռքերը նըրան չհասած՝ իր բոլոր ուժով դուրս հրեց նրան: Դէրվիշը

դուրս պրծաւ կատաղի ամբոխի ձեռքից և փախչելով՝ իրան գցեց ամենամօտ հայի տունը:

«Մենք՝ ժողովներս տեսնելով որ որսը փախաւ, յուսահատուեցինք և մի մարմին կազմելով՝ դնացինք բաղաքապետի տունը: Ամբոխը հետեւեց մեզ: Արդէն ժողովրդի մէջ խռովութիւն էր ընկել, ամենն էլ գրգռուել էին, և մենք մեր բոլոր կարողութեամբ աւելի ու աւելի յուզեցինք, բորբոքեցինք նրանց:

«Բաղաքապետը մի խիստ ջերմեռանդ մուսուլման էր: Մենք լիայոյս էինք, որ նա անմիջապէս կը միանար մեզ հետ: Մենք ամբաստանեցինք Ֆռանգ դէրվիշին՝ ասելով որ նա սուտ վարդապետութիւն է քարոզում և նպատակ ունի ժողորենելու մեզ, ջնջելու մեր կրօնը:

— Այս մարդը, ասացինք մենք, մեր մարգարէին խաբեբայ է անուանում և նա զգուշի, գարշի խօսքեր է ասում, մենք պահանջում ենք որ նա մեզ յանձնուի:

«Բաղաքապետը վարանեց, չէր իմանում ինչ անել, որովհետեւ նա գիտէր թէ ևրդացիների գործերի մէջ խառնուելը ինչքան վտանգաւոր էր. հետեապէս նա դժուարանում էր մեր կամքը կատարել:

— Ախր դուք ինչո՞ւ էք այդ Ֆռանգ դէրվիշին վիճաբանութեան հրաւիրում, ասաց նա, եթէ չէք ուզում լսել նրա ասելիքը: Եթէ դուք չէք կարող ձեր վիճաբանութիւններով յաղթել նրան, բռնութեամբ աւելի կը փչացնէք ձեր գործը, բռնութեամբ դուք աւելի փնաս՝ քան բարիք կը հասցնէք մեր կրօնին. բայց եթէ ձեր վիճաբանութիւնները աւելի զօրեղ են քան նրանը, և եթէ նա կը յաղթուի, չէ կարող պատասխան տալ ձեզ՝ այդ արդէն ցոյց կը տայ որ նա անհաւատ է, և մեր օրէնքի համաձայն արժանի է մահուան:

«Բաղաքապետի այս խօսքերից էլ պարտուելով մենք դուրս ելանք նրա տնից և կատաղած վրէժ գողացինք: Ես հաւատում եմ որ եթէ այդ բոլորին Ֆռանգ դէրվիշը մեր ձեռքըն ընկնէր, հաղար կտոր կ'անէինք նրան: Նա այնքան լաւ գիտէր այդ, որ՝ ինչպէս լսեցինք, իսկոյն փախել էր քաղաքից: Մինչև այստեղ մեր ջանքերը յաջող դնացին, որովհետեւ երկար ժամանակ նա չերկաց Սպահանում, բայց յետոյ կրկին եկաւ:

«Այս դէպքում ես այնքան առաջ էի դնացել և այնքան տարբեր ձևերով ցոյց էի տուել եռանդս, որ մեծ անուն շահեցի, թեպէտ դեռ մինչև վերջերս ոչինչ օգուտ չէի քաղել իմ անունից: Ես մտածեցի թէ մայրաքաղաքն էր միակ տեղը, ուր

ես պիտի աշխատէի մի հաստատուն և շահաւէտ գործ գտնել. ուստի գնացի Ղոււմ ինձ սիրելի դարձնելու այնտեղի մուշտահիդին, որի յանձնարարութիւնը, ես գիտէի, ինձ համար աւելի օգտաւէտ կը լինէր քան տասը տարուայ աղօթքն ու ծոմապահութիւնը: Ես կատարեալ յաջողութեան հանդիպեցի, որովհետեւ նա արդէն լսած լինելով իմ համբաւը՝ որպէս անօրէնների մտրակը, սիրով և ուրախութեամբ ընդունեց ինձ և հաճեց ինձ իր ժրպան աշակերտներէց մէկը համարել:

«Ես շուտով սկսեցի ամենայն եռանդով կոռել սուֆիների դէմ և շուտով վստահացայ խնդրել մուշտահիդից որ ինձ յանձնարարէր Թէհրանի օլէյմաների մարինն ու նշանաւոր պաշտօնական մարդկանց: Նա յայտնեց որ ինքը ամենեւին ուրախ չէր լինի որ ես բաժանուէի իրանից, բայց վերջապէս կատարեց խնդիրքս, և ես շուտով մայրաքաղաքում համարուեցի «սուրբ եղբայրութեան» անդամը:

«Պիտի խոստովանուեմ, Հանջի, որ չնայած ինքս ինձ վրայ այնքան բարձր համարում չունիմ, ինչքան ուրիշները ունին վրաս, ես իմ ակնկալած յաջողութեանը չհանդիպեցի մայրաքաղաքում: Ինձ հետ մրցողները բազմաթիւ էին և աւելի փորձառու քան ես: Նրանց պէս ես էլ պարտաւորուեցի սկսել գործս՝ պաշտօնական մեծ մարդկանց վրայ յարատեւ ուշադրութիւն դարձնելով: Մի անգամ «օրէնքի գլխի» (որը իսկապէս իմ աղան էր) մաշլիսում (ժողովում) գտնուելու շնորհին արժանացայ. յետոյ աստիճանաբար արժանացայ մեծ վէզիրի, արքունի գանձապահի, պետական քարտուղարի, դահճապետի և միքանի ուրիշ աստիճանաւորների ուշադրութեանը: Ես միշտ տեսնում էի. նրանց հետ առաւօտեան և երեկոյեան ժողովներում. բայց այդ բոլորից յետոյ, ես էլի հէնց այն աղքատ մուլան էի և կարօտով սպասում էի մի պատեհութեան, որով կարողանայի ինձ տարբերել հասարակ հօտից:

«Ամենից առաջ մեծ վէզիրը ուշադրութիւն դարձրեց վերաս, որովհետեւ ինձ մի անգամ աշողուեց նրան լացացնել օրհնեալ Հոսէյնի մահուան յիշատակի հանդիսում, որ տեղի ունեցաւ նրա տնում, և ուր ես այնքան ոգեւորուած քարոզ լսօսեցի ու երգեցի, որ արժանացայ նրա և բոլոր հանդիսականների հաւանութեանը: Այդ օրից՝ ես օրաւուր յառաջդիմել եմ, յատկապէս ժողովրդի աչքում, որի լաւ համարումը, ըստ իս, ամենաառաջին շահն է մի փառասէր մարդու համար:

«Բայց դու, Հանջի, պատեհութիւն ունեցար դատելու Թէ ժողովրդի օգնականութեան վրայ մինչև ինչ աստիճան կարելի է վստահել, երբ նրանց օգնութեանը հակառակ է լինում միա-

հեծան թագաւորի կեանքին: Չափից աւելի վստահելով իմ նը-
րանց վրայ ունեցածս ազդեցութեան վրայ, ես ինձ կորստեան
մատնեցի, և այժմ դու տեսնում ես դրութիւնս, տեսնում ես,
որ մի թշուառ թափառական դարձած՝ վերադառնում եմ հայ-
րենիքս ճիշտ այնպէս աղքատ՝ ինչպէս էի այնտեղից հեռանալիս:

Գլ. Կ.

Հաջի Բարան եւ մոլլա Նադանը ծրագիրներ են կազմում: Յոյց է տալիս,
որ աւազակները չեն կարող միմեանց վտտահել:

Երբ Նադանը վերջացրեց իր պատմութիւնը, ես աշխա-
տեցի մխիթարել նրան ասելով, որ նոյն ճակատագիրը, որ եր-
բմն նախագահել էր իր յաջողութիւնների վրայ՝ և ապա իր
դժբախտութիւնների՝ անտարակոյս դարձեալ կը ծառայէր
իրան և իրան կը դնէր այն դրութեան մէջ՝ որից այժմ նա
զրկուած էր, «որովհետեւ, ասացի ես, մենք երկուսս էլ լաւ գի-
տենք թէ կեանքն ինչ է Պարսկաստանում և թէ դա որչափ
անհաստատ է: Մէկ մարդու կամքով դու այս վիճակին եմ
հասել. այդ մէկ մարդը կարող է հրամայել որ դու լիտ դառ-
նաս քո քսոսորատեղից, ինչպէս որ նա մօրուքդ փետել տուեց
և քեզ արտաքսեց քաղաքից: Դժբախտութեան մէջ մի հա-
կազդեցութիւն (reaction) կայ, որ յաճախ մեծազոյն յաջողու-
թիւն է արտադրում: Այսպէս երբ դարբինը ջուր է սրսկում
շիկացած ածուխի վրայ, դա մի բոպէ հանգչում է, բայց փուք-
սերի ամենաթեթեւ փչումով կրկին զարթնում է և վառւում
կրկնապատիկ պայծառութեամբ:

— Ես էլ նոյն մտածմունքովն էի ինձ սփոփում, ասաց
նա. հէնց նոյն մտածմունքն էր որ ինձ երգել տուեց ճանա-
պարհին երբ դու վրայ հասար: Շահը, շատ հաւանականաբար,
հարկաւոր համարեց արդարութիւն անելով՝ իրան սիրելի դար-
ձնիւ քրիստոնեայ վաճառականներին. բայց շուտով կը դայ
այն օրը՝ երբ նա կարիք կը զգայ բարեկամանալու մահմէդա-
կան կրօնի պաշտպանների հետ, և այն ժամանակ ինձ պէս մի
մարդու կարծիքն ու ձայնը, այո՛, ինձ պէս մի մարդու՝ որ
սիրւում եմ ժողովրդից, նշանակութիւն կ'ունենայ նրա համար:
Պիտի խոստովանուեմ որ ես մտածում էի իսպառ թողնել
մոլլայութիւնը և վաճառական դառնալ. բայց բոլոր հանգա-
մանքներն ի նկատի ունենալով՝ ես կը հետեւեմ իմ սկզբնական
(original) ճակատագրին: Ես այժմ առիթ ունիմ ինձ մարտիրոս

հրատարակելու, և այդ, ես նոր եմ հասկանում, աւելի գնահատելի, աւելի թանկ է ինձ համար՝ քան ստացուածքս—տուշնըս, կարասիքս, սպիտակս էշս և նոյնիսկ մոթիւներս:

—Ուրեմն ի՞նչ ես մտածում անել, հարցրի ես, կը գտնային՞ հետ գնանք՝ թէ՛ կը մնաս Պարսկաստանում և կը սպասես դիպուածների ընթացքին:

—Ըստ իմ ծրագրին, պատասխանեց նա, ես պիտի գնամ իմ հայրենի քաղաքը—Համադան, ուր, հայրս որ դեռ կենդանի է, բաւական մեծ համբաւ է վայելում և բաւական մեծ ազդեցութիւն էլ ունի: Հօրս միջոցով ես բանակցութիւն կ'անեմ նախ կրկին մայրաքաղաքը վերադառնալու արտօնութիւնը ըստանալու, ապա նոյն աստիճանն ու պաշտօնները ձեռք բերելու, որոնցից ես այժմ զրկուած եմ: Բայց դժուար կողմն ես գնալու դու ես խոստանում եմ որ ինչպիսի երբ կը վերահաստատուեմ իմ պաշտօնների վրայ, քեզ դարձեալ մօտս կը հրաւիրեմ որ աշողացնես մոթիւներիս ամուսնութիւնը: Դու աւելի լաւ կ'անես, որ մօտս մնաս Համադանում և հետեւես բախտիս:

—Ա՛խ, բարեկամ, ասացի ես, իմ այժմեան այս ակնհերեյաշողութեամբ հանգերձ, ես քեզանից աւելի նժդեհ աքսորեալ եմ: Դէպքերը չարութեամբ են խաղ արել հետս, որովհետեւ տեսնում ես, անհ ես այստեղ եմ (Ալլահը գիտէ թէ՛ որքան հակառակ իմ ցանկութեանը) որպէս ընդունուած աւազակ: Ես անճարացած հետեւեցի ճակատագրիս, որը զգեստաւորեց ինձ մոլլա բաշու շորերով, հարստացրեց ինձ նրա փողով և նրատացրեց ինձ դահճապետի սիրուն և զարդարուած ձիու վրայ: Այդ միևնոյն ճակատագիրը այժմ պարտաւորացնում է ինձ փախչել իմ երկրից. ես չեմ կարող մնալ այստեղ, որովհետեւ գիտեմ, պիտի ճանաչուեմ, ձերբակալուեմ և կտոր-կտոր լինեմ: Ո՛չ, ես յոյս ունիմ մի քանի օրից յետոյ հասնել տաճկաց սահմանագլուխը, և այնտեղ ու այն ժամանակ միայն ես ինձ փրկուած, ապահովուած կը զգամ:

Այս ասելով, ես առաջարկեցի ընկերիս ընդունել աւարիս մի մասը, որով, յոյս ունէի, կը փակուէր՝ նրա բերանը: Նա իսկոյն ընդունեց, և ես շատ ուրախացայ: Նա վերցրեց տասը թուման, որ, ինչպէս ինքս ասացի՝ կը բաւականանար իրան իր այժմեան նպատակների համար, և որը նա խոստացաւ յետ վճարել երբ իր նպատակին կը հասնէր, այսինքն՝ կը վերադառնար իր պաշտօնների վրայ:

Տասը թումանը ստանալուց յետոյ նա կրկին աշխատեց համոզել ինձ իր հետ Համադան գնալ: Նա շատ սարսափելի

կերպով նկարագրեց այն վտանգը, որին ես կ'ենթարկուէի, եթէ յառաջ քան իմ տաճկաց սահմանագլուխ հասնելը բռնուէի:

— Որովհետեւ, ասաց նա, հէնց որ մոլլա բաշու մահուան լուրը իմացուի և դանձապետին էլ յայտնուի որ ինքը զրկուել է իր ձիուց, նա անպատճառ իսկոյն մարդիկ կ'ողարկի երկըրի բոլոր կողմերը քեզ բռնելու, և դէ, դու այնպիսի աչքի ընկնող մարդ ես, որ քեզ շուտով կը գտնեն և կը ձերբակալեն: Աւելի լաւ կ'անես, որ ինձ հետ ապաստանես, որովհետեւ ես կարող եմ քեզ անյայտ պահել մինչև փոթորիկն անցնի, և յետոյ դու կարող կը լինես աղատ ապրել, և ոչոք քեզ չի կասկածիլ:

«Գալով ձիուդ և նրա թամբին ու զարդերին, շարունակեց նա, մենք այնպէս ծածուկ կերպով կը ծախենք նրանց, որ ոչոք բան չհասկանայ: Համադանը շատ հեռու չէ այստեղից. եթէ մենք այս գիշեր՝ կէսգիշերին ճանապարհուկնք, վաղը շատ կանուխ այնտեղ կը հասնենք: Մենք երկուսով կը նըստենք ձիուդ վրայ և շատ հեշտութեամբ կը գնանք: Մտածիր որ քո մտածած ճանապարհորդութիւնը դէպի տաճկաց սահմանագլուխը շատ երկար է, և եթէ այդ կենդանին չկարողանայ քեզ տանել մինչև այնտեղ, դու անկասկած կը բռնուես:

Նրա այս խօսքերը մի նոր դարձուածք տուին մտածմունքներիս, և ես տեսայ, որ նա սխալ չէր խօսում: Բոլորովին անծանօթ լինելով Պարսկաստանի այս կողմերին, և զգալով թէ իմ ապահովութեան համար ինչքան անհրաժեշտ էր, որ ես լաւ ծանօթանայի ոչ միայն հասարակաց՝ այլև գաղտնի ճանապարհների հետ, ես մտածեցի, որ մինչև սահմանագլուխ փախչելս՝ այնքան էլ հեշտ գործ չէր ինչպէս ես երևակայել էի: Եթէ մոլլա Նադանը տրամադիր էր մատնելու ինձ, նա կը մատնէր որտեղ էլ որ լինէի. փախչէի կամ իր հետ գնայի՝ նա իր անելիքը կ'անէր. ուստի աւելի խոհեմութիւն համարեցի նրան հետևել և հետևապէս համաձայնութիւն յայտնեցի ուղեկցել նրան դէպի Համադան:

Մենք կերակրուեցինք, հանգստացանք և լաւ թարմանալով՝ կէսգիշերին ճանապարհ ընկանք և դեռ արևը չծագած՝ բաւական ճանապարհ էինք կտրել: Հասնելով մի բարձր հարթութեան վրայ, որտեղից տեսնուում էր Համադանը, մենք կանգ առանք վճռելու մեր անելիքը: Նադանն ինձ ցոյց տուեց մեզանից մէկ ֆարսաղ հեռու երևացող մի գիւղ և ասաց.

— Այդ գիւղում դու պիտի բնակուես, մինչև որ մոլլա բաշու տարօրինակ մահուան լուրը հնանայ անցնի, բայց դու անշուշտ չես կարող այնտեղ մտնել քո այդ փառաւոր շո-

րերով և այդ սիրուն ձիովդ առանց կասկածներ յարուցանելու լաւ կը լինէր որ մեր շորերը միմեանց հետ փոխենք. դու իմ հագլիր, ես քոնը և ձիդ էլ ինձ տուր: Այս հնարքով երկուսիս գործն էլ յաջող կը գնայ. դու մեր գլուղը կը մտնես որպէս հօրս ծառաներից մէկը և ես էլ պատշաճ զգեստով հօրս տունը մտնելով կը պահպանեմ անունս ու պատիւս:

«Այս կարգադրութիւնը, շարունակեց Նադանը, կը նպաստի երկուսիս փոխադարձ և միացեալ շահերին. քեզ ոչոք չի կասկածիլ ու ես էլ այլևս մուրացկանի պէս չեմ երևալ: Իմ խայտառակութիւնը լուրն ու պատմութիւնը անկասկած շուտով կը հասնի մեր գերդաստանին, և գուցէ նրանք շատ կը ստորանան մարդկանց աչքում. բայց այս երկրում, ուր մարդուս արտաքինը մեծ նշանակութիւն ունի, երբ որ լուր տարածուի որ ես տուն եմ դարձել թաւշապատ թամբով և ոսկով զարդարուած ձիով՝ մէջքիս էլ մի թանգագին փաշմիրի շալ փաթաթած՝ մեր գերդաստանն էլ, ես էլ կը վերականգնենք մեր դիրքըն ու պատիւը. ապա միքանի օրից յետոյ ինձ համար հեշտ կը լինի մի պատրուակով ծախել նրանց և փողը տալ քեզ:

Նադանի այս առաջարկութիւնը խրտնեցրեց ինձ, որովհետեւ ես դեռ այնքան վստահութիւն չունէի նրա վրայ, որ սիրտ անէի ապրանքս նրան յանձնել առանց խոստմնագիր ստանալու նրանից. սակայն ես հաւատում էի նրա տաճաների ճշմարտութեանը, հասկանում էի, որ անկարելի էր որ իմ շորերով ու ձիով ես կարողանայի տասն օրից աւելի առանց ճանաչուելու մնալ: Ճիշտ է, ես այժմ բոլորովին Նադանի ձեռքումն էի. բայց իր առաջարկած պայմանով՝ նա ինքն էլ այնպէս մեղաւկից կը դառնար ինձ, որ այլևս չէր համարձակիլ ամբաստանել կամ մատնել ինձ:

— Բայց, ասացի ես նրան, ենթադրենք, որ մի նասաղչի ճանաչի այս ձիուն, կարծում ես ի՞նչ կը դայ մեր գլխին — դու էլ կը բռնուես, ես էլ:

— Մեծ է Ալլահը, պատասխանեց Նադանը. չեմ կարծում որ որեւէ մէկը մեզ պէս արագ ճանապարհորդած լինի, և դու միամիտ կեցիր, որ նախքան որեւէ մի պաշտօնեայի Համադան հասնելը ես արդէն հօրս տանը կը լինեմ և արած կը լինեմ այն՝ ինչ որ հարկաւոր է մեր ապահովութեան համար: Դրանից յետոյ հեշտ կը լինի ձին թագցնել իր թամբով, զարդերով և այլով հանդեմ: Դու միամիտ կեցիր, ես իմ վրայ եմ առնում բոլոր պատասխանատուութիւնները:

Առանց աւելորդ մի խօսք ասելու իմ կողմից՝ մենք հանեցինք մեր շորերը և փոխեցինք միմեանց հետ: Նա հագաւ

հանգուցեալ մոլլա բաշու փառաւոր ղաւաճն (պարեգօտը), մուգ կանաչ մահուդ վերարկուն, Բաշմիրի շալ գօտին. իսկ ես՝ նրա հին շորերը որ հէնց իր հագին պատառոտուել էր իր թէհ-ըանից արաքսուելու օրը: Ես նրան տուի իմ սև գլխարկը, որի շուրջը նա փաթաթեց մոլլա բաշու գլխի շալը՝ որ դեռ պահել էի, և նա ինձ տուեց իր արաղչինը:

Ես ինձ հետ պահեցի մոլլա բաշու փողի քսակը, և մնացած փողը, ժամացոյցն ու կնիքները, բայց նրան տուի ղաւադանը, թէսրին, գրպանի հայելին ու սանրը: Նա յետոյ իր գօտու մէջ խրեց նրա թղթի փաթոյթը և երբ կատարեալապէս հագնուած հեծաւ ձին, այնքան նմանուեց հանգուցեալին, որ ես զարմացայ:

Մենք բաժանուեցինք միմեանցից, բաժանուեցինք առերևոյթ սիրով: Նա խոստացաւ շուտով իր մասին գրել կամ լուր ուղարկել, և միևնոյն ժամանակ ինձ տուեց հարկաւոր եղած ծանօթութիւնները իր հօր գիւղի մասին՝ թողնելով իմ հնարադիտութեանը որ կարողանամ գլուխս պահպանել այնտեղ:

Եւ նա քշեց գնաց: Ես տխրեցի երբ ինձ դտայ աշխարհում մենակ, անհաստատ ապագայիս մասին և կասկածաւոր ներկայիս: Որքան կարողացայ արագութեամբ քայլեցի դէպի գիւղը, շուարած էի թէ ինչ բնաւորութեամբ պիտի մտնէի այնտեղ: Յիրաւի ես նմանում էի երկնքից ընկածի, որովհետեւ մարդիկ ինչ գաղափար պիտի կազմէին մէկի վրայ, որ լաւ կերպարանք ունէր, բայց ոչ շալ ունէր իր մէջքին կապած, ոչ էլ վերարկու իր հագին, այլ միայն մի զոյգ կտրտուած տրեխներ ոտներին և մի արաղչին գլխին:

Երկար տատանուելուց յետոյ ես վճռեցի գիւղը մտնել որպէս ճանապարհին քիւրդ աւաղակներից թաւանուած մի վաճառական և այդպիսով պատճառ ունենայի այնտեղ մը նալու մինչև մի լուր ստանայի նաղանից, որը անկասկած հաղորդակցութիւն կը պահպանէր հետս և ես նրա տուած լուրերից կ'իմանայի թէ ինչքան երկար պիտի թաղնուած մնայի գիւղում:

Կատարեալ յաջողութեամբ գլուխ տարայ մտածածս: Բարի գիւղացիները, որոնց երկինքը իմ բախտից օփտել էր թմրութեամբ, հաւատացին և հիւրընկալեցին ինձ: Միակ անյարմարութիւնը որ ես ունեցայ այն էր, որ ստիպուում էի կուլ տալ մի պառաւ կնոջ տուած դեղերը, որ գիւղի բժիշկն էր և որին պատուիրուեց ինձ վրայ գործ դնել իր բժշկական բոլոր հանճարը:

Գլ. կա.

Մոլլա Նադանը կրում է այն պատիժը՝ որին արժանի էր Հաջի Բաբան, եւ որի շնորհիւ վերջինս խիստ հաւատացող է դառնում ճակատագրին:

Տասն երկար և տաղտկալի օրեր ես անցկացրի գիւղում առանց որեւէ լուր ստանալու Նադանից: Ես կարծում էի որ նրա աստղը դեռ խոտորնակի էր նայում նրան, և որ իրերը այնքան յաջող չէին գնացել նրա համար՝ ինչպէս ինքն ակնկալել էր:

Շատ քիչ հաղորդակցութիւն էր լինում գիւղի և Համադանի մէջ, և ես սկսեցի յուսահատուել, որովհետեւ ինձ թւում էր թէ այլ ևս ես ոչ մի լուր չէի ստանալու ձիւռս, նրա դարձարանքի և շորերիս մասին. բայց մի երեկոյ մի գիւղացի, որը գնացել էր քաղաք որպէսզի այնտեղ վարձուէր դաշտերում մշակութիւն անելու համար և որը վերադարձել էր յուսահատ սրտով՝ եկաւ մօտս և իր զրոյցով մի քիչ փարատեց երկիւղներս ու կասկածներս:

Նա ասաց որ Համադանում մեծ իրարանցում կար, որովհետեւ Թէհրանից մի նասաղչի էր եկել և ձերբակալել իրանց աղայի (գիւղատիրոջ) որդուն, ձին ձեռքից առել էր և իրան տարել էր մայրաքաղաքը ամբաստանուած որպէս մոլլա բաշուն սպանողը:

Թող ընթերցողը երեւակայի զգացումներս, երբ լսեցի այդ լուրը: Ես ինձ ապահովուած զգացի, բայց չէի կարողանում հասկանալ թէ դեռ ինչքան ժամանակ պիտի գիւղում մնայի: Ես իսկոյն յայտնեցի որ կատարելապէս առողջ էի գգում ինձ, և հիւրասէր գիւղացիներին «մնաք բարով» ասելով՝ հեռացայ գիւղից և շտապեցի դէպի Համադան ստուգելու գիւղացու հաղորդած լուրի ճշմարտութիւնը:

Նադանի հայրը յայտնի մարդ լինելով Համադանում, ես առանց դժուարութեան կարողացայ գտնել նրա տունը: Ես ներս չմտայ, ոչ էլ ուղղակի հետաքրքրուեցի բարեկամիս դրութեան մասին: Այլ կանգնեցի նրա տան մօտ գտնուող սափրիչի խանութում երկու նպատակով. մէկ նրա համար, որ ինձ հարկաւոր էր նրա օգնութիւնը գլխիս ու երեսիս վայելուչ կերպարանք տալու և մէկ էլ որ գիտէի, որ միայն նա էր կարող լաւ տեղեկութիւն տալ Նադանի իսկական դրութեան մասին:

Սափրիչը բարեբախտաբար մի շատախօս և ուրիշների գործերի մէջ քիթ խոթող մարդ էր: Երբ ես նրանից հարցրի օրուայ լուրը և մի կերպով պատճառաբանեցի թէ ես ինչու անտեղեակ էի մնացել այն դէպքի մասին, որ զարմա-

ցրել էր ամեն մարդու, նա զարմացած մի-երկու քայլ յետ գը-
նաց և բացագանչեց.

— Միթէ հրտեղից ես գալիս դու, որ ոչինչ լուր չունես
այդ շուն մուլա Նադանի գործած յանցանքի, անօրէնութեան
մասին: Այդ մարդը սպանել է մուլա բաշուն. այդ բաւական
չէ՝ նա հանել է նրա շորերը և ինքն է հագել և այդքանով էլ
չբաւականանալով՝ գողացել է դահճապետի ամենալաւ ձիերից
մէկը իր բոլոր զարդերով հանդերձ: Օ՛, նա շատ վատ աղտո-
տութիւն է կերել:

Նա խնդրեցի սփրիչից մանրամասնութեամբ պատմել ինձ
բոլոր պատմութիւնը, և նա առանց սպասելու, որ երկրորդ
անգամը խնդրէի՝ սկսեց այսպէս.

«Մօտաւորապէս տասն օր սրանից առաջ այդ Նադանը
հասաւ իր հօր տան դուռը՝ նստած մի գեղեցիկ, լաւ զարդա-
րուած ձիու վրայ, որը աւելի սազ կը գար մի խանի կամ մի
զինուորականի՝ քան Ալլահի մի աղքատ ծառայի: Ինքն էլ շատ
պատուական շալեր էր հագել և ճիշտ մուլա բաշուն էր նմա-
նում: Իր այդ զգեստով ու ձևով նա շատ զարմացրեց համա-
գանցիներին, որովհետև դրանից միջանի օր առաջ այստեղ
լուր էր տարածուել, որ Շահը սաստիկ բարկացել էր նրա վը-
րայ և Թէհրանից աքսորել էր ամենախայտառակ ձևով:

«Ենթե նա իր հօր տան դրան իջաւ իր ձիուց, շատ բաներ
պատմեց իր մասին, և երբ նրան հարցրին թէ ինքն ինչո՞ւ էր
արտաքսուել մայրաքաղաքից, նա կարծես թէ շատ քիչ նըշա-
նակութիւն տուեց իր խայտառակութիւնը և ասաց, որ իրան
ծածուկ կերպով ասուել էր որ իր պաշտօնանկ լինելն ու խայ-
տառակութիւնը ժամանակաւոր էր, և որ իր սիրտը շահելու հա-
մար՝ իր հեծած ձին ընծայուել էր իրան:

«Ամեն մարդ հաւատաց նրա այս բացատրութեանը, և նա
մեծ պատուով ընդունուեց իր հօր տան մէջ, բայց շատ դժ-
բախտաբար, հէնց միւս օրը երբ նա պատրաստուում էր ձին
հեծնել և շրջել քաղաքում որպէսզի բոլորը տեսնէին իրան,
նրանց տան դրան երևաց մի նասաղչի, որ Թէհրանից էր ե-
կել: Այդ նասաղչին կանգ առաւ, շատ ուշադրութեամբ զննեց
նրա ձիան թամբը, սանձն ու զարդերը և բացագանչեց. «Լա
Ալլահ իլ Ալլահ»: Այնտեղ կանգնած մարդկանցից նա հարցրեց
թէ այդ ձին ումն էր պատկանում, և նրան ասուեց որ դա
մուլա Նադանինն էր:

— Մուլա Նադանինն, գոռաց նա կատաղութեամբ. «Բւ
շունն է նա: Այդ ձին իմ աղայի՝ դահճապետի սեփականու-

թիւնն է, և ով որ ասում է «չէ, նրանք չէ», սուտ է խօսում, ով կ'ուզի նա լինի՝ մոլլա կամ ոչ մոլլա:

«Այս միջոցին տանից դուրս եկաւ յանցաւորը, որը նասաղչուն տեսնելով աշխատեց չնկատուել նրանից, որովհետեւ ինչպէս իմացուեց նա այն նասաղչիներէից մէկն էր որ նրան էջի վրայ դրած ման էր ածել Թէհրանի փողոցներում: Նազանն իսկոյն գլխի ընկաւ թէ մոլլա բաշու շորեր հագնելը ինչ վրտանգի էր բերել իրան, և նա փորձ արեց փախչել, բայց նասաղչին իսկոյն ճանաչելով նրան՝ գոռաց «բռնեցէք դրան, հոգին հանէք, դա հէնց ինքն է, հէնց իմ որոնած մարդն է: Կեցցես իմ բարի աստղ. Ալիի գլուխը վկայ, մարդարէի մօրուքը վկայ՝ որ դա է այն սնանկացած աւաղակը, որ սպանեց մոլլա բաշուն ու գողացաւ դահճապետի ձին»:

«Այս ասելով՝ նասաղչին իջաւ իր ձիուց և իր ծառայի և հանդիսատեսների օգնութեամբ (որոնք տեսան որ նասաղչին իշխանութիւն ունէր գործելու) բռնեց Նազանին, որը, իրան պաշտպանելու համար՝ հազար ու մէկ երգումներով պնդում էր որ ինքը ոչ աւաղակ էր, և ոչ մարդասպան, և որ ինքը պատրաստ էր զուրանով երգուելու և հաստատուելու իր անմիղու-թիւնը»:

Սափրիչը ճշտութեամբ պատմեց Նազանի և նասաղչու մէջ տեղի ունեցած բոլոր խօսակցութիւնը, որի հետեանքն այն էր եղել՝ որ վերջինս առաջինին բռնելով տարել էր Թէհրան՝ արհամարհելով Նազանի հօր և բարեկամների խոստացած կաշառները:

Ո՛չոքի կտրծքը դեռ այնքան չէր ուռչել մաքառող զգացումներով՝ ինչպէս եղաւ իմս երբ (լսեցի թէ իմ ընկած ընկերն ինչ վիճակի էր հասել, ինչպէս պատմեց ինձ սափրիչը՝ Նախ ես ողբացի ձիու, նրա զարդարանքների և իմ շալ զգեստի կորուստը, սակայն յետոյ ինձ մխիթարեցի այն մտածմունքով, որ եթէ մոլլա Նազանի գլուխը կտրուէր, այլ ես ոչոք ինձանից հաշիւ չէր պահանջելու գործած յանցանքներէս համար: Ես դարձեալ սկսեցի վրաս նայել որպէս մէկի՝ որ վայելում է իր բարի աստղի պաշտպանութիւնը, այնինչ Նազանի վրայ նայեցի որպէս մէկի՝ որ, իհարկէ, դատապարտուած էր միշտ դժբախտ լինելու, որովհետեւ մենք ինչո՞ւ պիտի փոխէինք մեր շորերը, և ինչո՞ւ նա պիտի վերցնէր ձիւս, այն էլ այն ժամանակ՝ երբ ես ամենակին տրամադիր չէի համաձայնուելու:

Ինչևէ, չնայած որ շատ հաւանականաբար նա կը կրէր այն պատիժը որին ես էի արժանի, այնուամենայնիւ ես ինձ վտանգից ազատուած չէի համարում քանի դեռ Պարսկաստա-